



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**


Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material



9 08
SILVA

91.99
- 79

NOV 2011

~~№ 381~~

~~4703~~

АЛЕКСАНДРОП. ГОРОДСКАЯ
Цѣна кн. ~~р. 57~~ к., пер. ~~10~~ к.
БИБЛИОТЕКА-ЧИТАЛЬНЯ

~~С. Шенкина~~

08 04 2013

504

891.99
6-79

0 1 1 S £



28745

ՆՈՅՆ ՀԵՂԻՆԱԿԷՆ

Տուրկին Ազգավէպ (պատկերազարդ) [1902	
Անէճք ազգային ողբերգութիւն	1903
Տազնապը ազգավէպ	1904
Սամեհնիկ ազգային ողբերգութիւն	1904

— ❦ —

(~~32~~-2000)

328-2000

(~~30~~-97)

891.33

6-79

~~ԱՆԿՐ.~~

30

Հ. Ս. ԵՐԵՄԵԱՆ

Ո Ի Խ Տ Ը

ԱԶԳԱՅԻՆ ՈՂԲԵՐԳՈՒԹԻՒՆ

առև. / 6.2 37.



ՎԵՆԵՏԻԿ Ս. ՂԱԶԱՐ

1905


ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿՐԹԱԳՐԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ

Գ Յ Կ Ի Ո

ՄԱՐԿԱԿԱՆ ԿՐԹԱԳՐԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ



Handwritten text, possibly a name or date.



Ա Ն Զ Ի Ն Ք

ՆՈՑԵՄՁԱՐ	ՀԱՆԳԻՍՍԱԿԱՆՔ
ՔՈՒՐՄ (ՈՒԽՏԱԻՈՐ)	ՓՈՂԱՀԱՐՇՔՈՒՐՄ
ՀՆԶՈՂՆԵՐ	ԶՕՐՔԵՐ
ԿՈՒՍԱՆՔ	ԶՕՐԱՊԵՏ
ՀԱՅՐԸ	ՍՊԱՐԱՊԵՏ
ԽՆՈՂՔ	ԱԻՏԱԲԵՐ
ՀՐԱՆՈՑՇ	ԵՐԻՏԱՍԱՐԳՔ
ԱՐՈՒՍԵԱԿ	ԽԵՐԵՐ
ՔՐՄԱՊԵՏ	ՊԱՌԱԿՆԵՐ
ՔՐՄԱԿԱՆՔ	ԱՂԶԻԿՆԵՐ
ՔՐՄԱՆՈՑՇՔ	ԱՄԲՈՒ
ԿԻՆԸ	ՄԱՐՏԻԿՆԵՐ
ՔԵՐԹՈՂՆԵՐ	ՎԻՐԱԻՈՐԵԱՂՆԵՐ
ԶՈՀԱՐԱՐ ՔՈՒՐՄԵՐ	

Handwritten notes and signatures at the bottom right of the page.



Ո Ւ Խ Տ Ը

Ո Ղ Բ Ե Ր Գ Ո Ւ Թ Ի Ի Ն

ՀԱՅ ՇԵՔԱՆՍՍԱԿԱՆ ԴԱՐԵՐԷՆ

ԱՌԱՋԻՆ ԱՐԱՐՈՒԱԾ

Թատերաբեմին ձախակողմը դառիկեր ցորենի հնձած դաշտ մը, ուր երկու գիւղացի խուրձերը կը գիլգեն, կը կապեն: Աջ կողմը տափարակ մարզագետին մը, որուն եզերքը Թատերաբեմին կողին կից՝ փոքրիկ մեհեան մը մեծ դռնով, հոն կը տեսնուի Արամազդայ արձանը, առջեւը մեծ եռոտանի մը, որուն վրայ կայ ափսե մը, տասը կտուցով, ուսկից ճրագի բոցը վեր կը բարձրանայ: Դրան քով ցնցոտիներ հագած քուրմ մը տարեց, Թխադեմ, երկու ձեռաց մէջ գլուխը կախած, մտածկոտ: Թատերաբեմի խորը բարձրադիր բլրան մը վրայ կ'երեւի սեւ սարիսպներով շրջապատուած, նոճիներու, ձիթենիներու մէջ Թաղուած քառակուսի որմերով մէկ մեծ

գմբէթով մեհեան մը: Հեռուէն պառաւ մը չոր ճիւղե-
րու խորձ մը շալկած, հաստ գաւազան մը ձեռքը, կա-
մաց կամաց մրմուռով կը հեռանայ դէպ ի մեհեան:

ՏԵՍԱՐԱՆ ԱՌԱՋԻՆ

ՔՈՒՐՄ. ՀՆՁՈՂՆԵՐ. Վարագոյրը բացուելէն
մէկ քէշ վերջը, քուրմ և հնձողները կը փոխեն իրենց
առաջուան դիրքը: Հնձողք մերթ ընդ մերթ կը նային
հեռուն ձախակողմը, ուսկից կոյսերու անոյշ ներդաշ-
նակ երգը կը լսուի: Իսկ փուրմը կը բանայ մագաղա-
թէ գլան մը, վրան նայելով կը մրմնջէ անհասկանալի
աղօթք մը. ու յետոյ ձեռն ի ծնօտին, կ'երգէ:

ՔՈՒՐՄ

Օրը պայծառ, սիրտըս խաւար,
Մենաւոր եմ ու կեանքըս սառ:
Ծաղիկներուն ամէն ժրպիտ
Փափուկ սըրտիս ծաղր է կոպիտ:
Արեգ ի զուր ոսկեծիրան
Լուսուկդ արծաթ սըրտիս խորան
Կու գաս շոյես զիս շրպարես:
Մըր կեանք հեռի այս տաճարէս . . .
Մենաւոր չէ մունջ երկինք
Աստղեր թըրթոռն ունի ինք.
Մենաւոր չէ խաւար անտառ
Իր անձաներ իր ամէն ծառ
Ունին տատրակ ունին թռչնակ
Մենաւոր չէ ծործոր դեասակ:

Ոհ ամէն տեղ, ամէն անկիւն
Կայ երգ, ծիծաղ ընկերութիւն:

ՀՈՎԻՒՆԵՐԷՆ ՄԻՆ

Մեհեանական զաւակ օրհնել, ամէն յոյս՝
Սըրտիդ մէջ էր փըլած տեսնես ու մարած.
Տես հեռուէն ինչպէս ահա ամէն կոյս
Կեանք ու ծիծաղ սիրեն կ'երգեն հիացած:

ՔՈՒՐՄ

Հնձէ հնձող հունձքը լեցուն
Շալիէ խուրձերդ երգով ցընծուն,
Տար արտերէն ճակտիդ պըտուդ
Ու հանգիստ թող սըրտիս նըկուդ:

Կոյսերու երգի ձայնը կ'որոշուի: Թատերաբեմի ան-
ձինք բերանաբաց ու զմայլած մտիկ կ'ընեն:

ԿՈՒՍԱՆՔ

Ծաղիկներ ենք երջանիւթեան.
Մենք լոյս ծըծենք, յոյս և հըրճուանք
Յանենք սըփոկներ. անմեղութեան
Դրախտէն քաղենք քաղցրանոյշ կեանք:

ՔՈՒՐՄ

Պայծառ անամպ երկինց վըրայ
Ի'նչպէս արեւ կու շողըղայ:
Ինչո՞ւ երբ սիրան է երջանիկ
Մոռնայ թէ կեանքն է խաբուսիկ:

ՀՆՁՈՂՔ

Լըռէ գաղթէ մեհնական
 Հերիք է քո ողբ ու կական:
 Մենաւոր ես, չես մեղաւոր.
 Ո՛հ մի երգեր երգդ ահաւոր:
 Թէ կուսանաց երգն անուշակ,
 Քեզ դանազին հնչէ գուշակ,
 Առանձնացիր մըտիւր բազին
 Ողբացիր կեանքըդ դանազին:

Քուրմը ամօթիած, երեսը կը ծածկէ լռիկ տխուր.
 հնձողք, անձայն յափշտակուած կը լսեն կուսանաց երգը:

ԿՈՒՍԱՆՔ

Արտեր ոսկի հասկերով
 Մեզի գըլխով տան բարեւ:
 Մեր խոպոպներ շարժէ հով:
 Ինչո՞ւ շիկնիս դու արեւ,
 Երբ տաս համբոյր մեր այտին.
 Ինչո՞ւ հողմիկ և լուսին
 Նախանձելով թալկանաք
 Երբ կոյսին երգ իմանաք:

ՀՆՁՈՂՆԵՐԷՆ ՄԻՆ

Տեսէք չըքնաղ սէրն այն զըստրիկ
 Այն խատուտիկ ծաւին փոքրիկ,
 Նոյեմդարն այն փափկիկ կուսան

Գերազանցէ ամէն գուսան.
 Ոսկեծըղին կարծես մայր
 Անոր շարժէ սրտին լար:
 Ո՛հ ինչ անոյշ մեղմ քաղցրանոյշ
 Անոյշ երգէ զերգ քըրմանոյշ:

ՔՈՒՐՄ

Հնձող հեռի տաճարէս
 Այդ խելագար հառաչանք.
 Երգովըդ զես շուարես
 Լարես սըրտիս բիւր տանջանք:

ՀՆՁՈՂ

Քաշուէ բարի մեհնական
 Լըռիկ մընջէ ողբ ու կական
 Ու մեզ թոյլ տուր ազատութիւն.
 Գիտենք սիրոյ վեհ սըրբութիւն,
 Մենք համարձակ ոչ թաքթաքուր
 Գիտենք սիրել սէրը մաքուր.
 Եթէ հարկ է սէրն ալ կ'երգենք
 Ինչո՞ւ կեղծենք, ինչո՞ւ նենգենք:
 Բայց և ինչո՞ւ ինչ որ սիրուի
 Վատ մեկնուի. զերգ տիրուհի
 Մայր Անահիտ ո՞վ է ըզգտատ
 Ասա մեզ քուրմ, թէ ունիս փաստ:

ՄԻՒՍ ՀՆՁՈՂ

Ձեմ հասկըցած, չեմ ըմբռնած
 Ինչո՞ւ չըլլանք քիչ մ'ամօթիսած
 Անսանձ բերնով դատենք դամէնք
 Մաքուրն ու պիղծ հաւտար դատենք:

ՏԵՍԱՐԱՆ ԵՐԿՐՈՐԿ

Կուսանաց խումբը թատերաբեմին կը մօտենայ. կը
 լսուի էրենց նախկին երգի («Արտեր ոսկի հասկերով»)՝
 կրկնութիւնը: Կը լսեն հնձողք: Քուրմը կը մտնէ տա-
 ճար: Նոյեմզար հազիւ թէ թատերաբեմ կը մտնէ, էր
 պարին կ'ուղղէ երգը:

ՆՈՅԵՄՋԱՐ

Մեր երգն ու հառաչ թող հնչեն մեղմիկ,
 Եւ փափկիկ զեփիւս թեւերով թըրթոուն
 Տանէ հասցընէ մեր տենչանք ջերմիկ
 Հոն ուր կը պարէ պարն արքայազուն:

ՊԱՐ ԿՈՒՍԱՆԱՑ

Նազելի բընար հընչէ Նոյեմզար
 Իր նըման չըքնաղ դարեր բիւր հազար
 Բընաւ չի ծընան, բընաւ չի տեսան:
 Երբ իր ձայն լըսեց Մասիսն անսասան
 Սըրտաթունը շարժեց իր ճերմակ գըլուխ.
 Յուզուած նայեցաւ լացաւ սըրաարուխ:

ՆՈՅԵՄՋԱՐ

Մասիսն աշեւոր կը թափէ արցունք,
 Կու լայ իմ վըրաս, իր սըրտով փըղձուկ
 Բայց ես արտասուաց ո՛հ չեմ արժանի
 Ընկերք սէր ձեզնէ թող չի բաժանի.
 Իմ հայր զիս ձօնեց վեհ Արամազդին
 Ձիս համոզեց թէ՛ մեհեանն է ազին:
 Ինձի քարոզեց թէ կուսութիւնն է կեանք
 Իսկ վայելք հըրճուանք է պատրանք տանջանք:

ՊԱՐ ԿՈՒՍԱՆԱՑ

Ուրախ ու զուարթ պարով ու երգով
 Յաւէտ պիտ' ապրինք երբ մենք քովէ քով
 Անցընենք օրեր, ու բաղին այն դաժան
 Գըլթայ ու պահէ ըզմեզ անբաժան:

ՆՈՅԵՄՋԱՐ

Բաղդը ձեզի պար
 Ձեզի յուսահատ
 Փըչէ գաղափար:

ՊԱՐ ԿՈՒՍԱՆԱՑ

Մենք չենք սիրեր սըգաւոր
 Օրեր տեսնել ահաւոր.
 Կ'ուզենք ապրիլ միշտ զուարթ
 Թէ չի խըլեն ըզքեզ վարդ:

ՆՈՅԵՄՋԱՐ

Բաղդիս վրձնական
Սեւ դատակրնիք
Չեղըն հայրական
Գրբած է կանխիկ,
Կ'օրհնեմ իմ օրեր
Թէեւ ինձ ըլլան
Վատ պրծոխմբեր:
Երբէք զիս չի՛լան
Ձիս սիրող կուսանք:

ՊԱՐ ԿՈՒՍԱՆԱՑ

Նոյեմզար ծաղիկ
Զոհելով ըզքեզ,
Գալարուին աղիք:
Երբ մենք աղէկէզ
Ըզքեզ յաւիտեան
Կը տեսնենք հեռու:
Մեհենի ատեան
Թէեւ մեծարու
Սակայն սոսկալի
Զարդէ հրբաման:
Դու վարդ նազելի
Ու սէր անսահման
Ինչո՞ւ թարշամիս
Մարիս փրձանաս:

Մենք ամէն ամիս
Քեզ հասած վրնաս
Կ'երթանք ողբալու
Կ'երթանք սրգալու:

ՀՆՁՈՂՔ

Որքան երջանիկ
Ձեր երգն անուշիկ
Հեռուէն հընչէր.
Այն խրոխտանք թնչ էր.
« Թէ երջանկութեան
Եւ անմեղութեան
Ծաղիկներ ենք. լոյս
Ծրծենք, ցանենք յոյս . . .
Հիմա է՛ր այդքան
Ձեր երգն ողբական
Կը հընչէ սրխուր
Դուք կ'ըլլաք փրշուր:

ՊԱՐ ԿՈՒՍԱՆԱՑ

Հնձողք մանգաղ շարժեցէք,
Մի մրտածէք մեզ երբէք
Բաղդէն ինչ որ մենք քաղենք
Ըլլանք խաւար կամ հրեղէնք
Ինչ որ ըլլանք, ինչ որ ենք
Թէ հառաչենք կամ երգենք

Հնձողք մանդաղ շարժեցէք
Մի մըտածէք մեզ երբէք:
Հատու սուր է մեր լեզուն
Խոցէ սիրար ամենուն:
Մըտքով մոլար ու պըզտոր
Այն որ զիտէ մեզ խոտոր
Շուտով խոցենք անոր սիրա
Չենք խընայեր ապտակ բիրա:

Քուրճը քմծիծաղով կ'երեւի տաճարի շեմին վրայ ու
հեգնելով կ'երգէ:

ՔՈՒՐՄ

Վաշ ձեզ միամիտ բարի մըշակներ,
Վաշ ձեր երերուն հէք երազներուն,
Ինչ դուք կ'երգէիք, յուսայիք ինչեր.
Հիմա ամէն բան կը տեսնէք փըքուն . . .

ՀՆՁՈՂՔ

Գեղը հեռու անձանօթ,
Գեղը սիրուն ու թաքուն
Սիրելի է ամէնուն.
Լաւ է պաշտել այն անօթ
Որ կը կըրէ երկնային
Անկեղծութիւն անբիծ ջինջ:
Ոհ երազ է ամէն ինչ.
Երազք դեռ մեզ կը նային:

ՊԱՐ ԿՈՒՍԱՆԱՑ

Արի Նոյեմզար՝ որքան ուշանանք
Տաճարիս այս մօտ որքան տընտընանք
Խըրատ կը լըսենք մեր ծաղկած սըրտին.
Մենք այլ խօսքերուն մընանք անշըրդին:

ՆՈՅՏՄՁԱՐ

Պարք՝ պար բըռնած թէ կ'ուզէք
Արիք թըռիք հեռացէք.
Չիս հոս թողէք մօտ քուրմին,
Պիտ՝ լամ ողբամ զիմ մարմին:

ՊԱՐ ԿՈՒՍԱՆԱՑ

Մենք ծաղիկներ հողմով թըռչուն,
Քանի քեզ հետ միշտ ապրեցանք,
Սըրտիդ աթոռ պերճ պաղպաջուն
Կ'ընենք մեր սիրտ կոյս մեր պարծանք:

ՆՈՅՏՄՁԱՐ

Ահա իմ հայր, ահա շուտով,
Հոս կը հասնի. դուք հեռացէք.
Սիրուն քոյրեր չունիք կորով,
Մի զիմադրէք անոր երբէք:

ՊԱՐ ԿՈՒՍԱՆԱՑ

Մենք ուխտեցինք յաւիտեան
Մընալ քեզմէ անրաժան:
Ի միասին պիտի լանք,

Պիտի քաշինք բիւր տանջանք:

Մենք ուխտեցինք մինչեւ մահ

Արհամարհել ամէն ահ:

Մենք ուխտեցինք անդադար

Խընդալ, երգել, բըռնել պար:

ՆՈՅՄՁԱՐ

Կոկոն էի կարմրուկ

Հիմա ծաղիկ մը բացուած,

Բայց արդ կեանք մը չորջրուկ

Ահա դիմացս է բացուած:

Պէտք է գոցուիմ հեռանամ

Գերեզմանին մէջ մըտնամ:

ՊԱՐ ԿՈՒՍԱՆԱՅ

Այն ինչ խիզախ քարոզներ

Կ'երգէիր մեզ Նոյեմզար.

Հիմա ինչո՞ւ չարաչար

Լըքուած մոռնաս կեանք ու սէր:

ՆՈՅՄՁԱՐ

Իմ պատմութեան ամէն էջ

Գաղտնի ծածուկ կու մընայ:

Ատրուշան կայ սըրտիս մէջ

Ուր ամէն յոյս փըճանայ:

Կոկոն էի

Կարմրուկ

Պիտ' ծաղիկի

Բայց եղճկ.

Արդ պանդուխտ

Եմ նըսեմ,

Իմ հօր ուխտ

Կատարեմ:

ՏԵՍԱՐԱՆ ԵՐՐՈՐԳ

Նոյեմզարի հայրը և կուսանաց ճողքը կը մտնեն
Թատերարեմ: Պարը աղերսելով Նոյեմզարի հօր կ'ուզ-
չէ իր երգ:

ՊԱՐ ԿՈՒՍԱՆԱՅ

Ո՛հ ինչ սիրտ է և ինչ գուլթ

Որ իր ծաղիկ չըքնաղ կոյս

Կ'աննէ նետէ զընտան մութ,

Զոհէ կ'այրէ կոյսին յոյս:

ՆՈՅՄՁԱՐ

Պար ձեր գորով համակրանք

Լարեն ինձի բիւր տանջանք.

Դուք զիս անդէս կը նեղէք

Թէ զիմադրէք հօրըս հէք:

ՀԱՅՐԸ

Դիք և երկինք ըզմայած

Պիտի գըրկեն իմ նուէր,

Դըստրիկ կոկոնս է ծաղիկը

Կոյսըս զոհեմ ես անլաց:

ՊԱՐ ԿՈՒՍԱՆԱՑ

Վա՛շ Նոյեմզար սիրուն շուշան
 Հօրըդ պատրանք քեզ ասրուշան . . .

ՀԱՅՐԸ

Վառ վառ ի վառ հոգիներ
 Դիմեն տաճար անդր ի վեր .
 Կազմեն հանդէս հոգեկան
 Զայնեն ծիծաղ ու կական :
 Պէսպէս աղերս ու մաղթանք
 Լքսն ամէն քրքումականք :
 Պարք կուսանաց ծն ի վեր
 Անդր ի տաճար ձեր նուէր
 Տարէք սուէք Անահտայ
 Որ նոր յոյսեր ձեզ կու տայ :
 Թողէք ինձի իմ դըսարիկ
 Գիտեմ ինչ որ կը զոհեմ,
 Խեղահաս եմ չեմ փոքրիկ
 Մի պաղատիք կամքիս դէմ :

ՊԱՐ ԿՈՒՍԱՆԱՑ

Սարերն ի վեր, Մասիսն ի վեր
 Արեք ընկերք վազենք թըռչինք
 Գըտնենք նոխազ սուրբ նուէր
 Աննենք մատաղ՝ որ երկինք
 Նոյեմզարայ ուխտ մոռնայ .
 փոխան կուսին նոխազ սուրբ

Կ'առնենք նուէր Անահտայ
 Պարենք երգենք երգեր նուրբ :

ՀԱՅՐԸ

Ողջամբ հեռի հեռացէք,
 Գացէք գուսանք՝ Նոյեմզար
 Զիմ կոյս լացէք ամէն սար :
 Շարժուն չէ կամքս իբր եղէդ,
 Ուխտեցի ուխտ աստուածոց
 Պիտ՝ իյնայ կոյսս երկնից ծոց :

ՊԱՐ ԿՈՒՍԱՆԱՑ

Ընկեր նազելի, շուշան Նոյեմզար,
 Թող հօրդ երկինք՝ տայ տարիներ հազար .
 Քանի խելահաս ես քու գործերուդ
 Կամքովըդ գործէ, քեզ ունեցիր գութ .
 Մտցիր մանկութեան ուխտըդ միամիտ
 Անտա՛ մի միայն ձայնին ճըշմարիտ :

ՆՈՅՏԵՄՁԱՐ

Ճըշմարիտ ձայնին թէ պէտք է անսալ,
 Ուխտս Արամազդին տիեզերակալ
 Պէտք եմ կատարել, չըլլալ ուխտադրուժ,
 Կուսութեան կապանք ինձ կն միշտ անուշ :

ՊԱՐ ԿՈՒՍԱՆԱՑ

Թէ ընկերութեան փարելի հոգին՝
 Կամենայ շնչել յուշեր տըլըրագին ,

Հողին Նոյեմզար ուխտագրուժ ըլլայ,
իր ընկերութեան այսպէս անխընայ.
Մենք հաւատարիմ մնանք իր սիրուն
Յաւիտեան կու լանք իր պատրանք անհուն:

ՆՈՅՆՄԱՐ

Ընկերք սիրուն պարերգու
Ինչո՞ւ տրխուր կ'ըլլաք բու.
Ոստոսակը՞լ պարելո՞լ
Զի՞մ երգեցէք ջերմ գորո՞լ:

ՊԱՐ ԿՈՒՍԱՆԱՅ

Նոյեմզարի այն պատրանք
Արեք երթանք, լանք ողբանք:

ԾՆՈՂՔ

Ուրախութեան մեր հանդէս
Ուխտի խընդրո՞լ է՞ր անտես
Կ'առնենք այսպէս վիճելո՞լ.
Հապա ամբոխ պարելո՞լ
Դիմենք պարաէլ սըրբազան,
Երգեր հիւսենք զանազան,
Մըթընցընենք օրն ամբողջ
Զոհենք մատաղ նոխազ ողջ:

ՀԱՅՐԸ

Ամբոխին հանդէս, նուիրական պար
Ինչո՞ւ խանդարի այսպէս վայրապար:

Ուխտի մեր հանդէս մեզի լուղ մընայ
Ամբոխն առանց մեզ թող երթայ խընդայ:

ԾՆՈՂՔ

Արեք դասերք մեր կուսանք
Ալ ի զուր է ի զուր ջանք.
Խախտել ուխտը այն կուսին:
Շաղկենք նոխազ մեր ուսին
Հանենք զանոնք սուրբ խորան,
Վառենք կըռոց կրակարան:

ՊԱՐ ԿՈՒՍԱՆԱՅ

Գացէք ծընողք փարելէք
Երգեցէք երգ վայլալիկ.
Աստուածներէն խնդրեցէք
Ուխտաւորաց այս խեցքեկ
Երազները փարատել.
Մոլար սղի և անել
Մեր զիմացն է արգ բացուած.
Մեր հողին չէ՛ այնքան ցած
Որ ուրանանք մեր ընկեր,
Թողունք մեր այս սըրտին սէր:
Գացէք ծընողք ձեր ուխտին.
Մեր երգերո՞լ աղքատին
Նոյեմզարի փափկիկ սիրտ
Կակղի և չի մընար բերտ:

322-2000 (82-200930-97)

ՀԱՅՐԸ ԳԵՂ

ԵՎԻՆ ԵՂ

ԵՎԻՆ ԵՂ

ՀԱՅՐԸ ԳԵՂ

ԵՎԻՆ ԵՂ

ԵՎԻՆ ԵՂ

ԾՆՈՂՔ

Վեհ քան զամեն ուխտ խըրախճանք

Վեհ քան զամեն սէր ընկերին

Են աստուածներ տաճարականք.

Կ'երթանք զոհել Արամազդին:

Ծնողք կը մեկնին այդ երգը բերաննին. կը քան
կուտանք, հնձողք և միւսները:

ՀՆՁՈՂՔ

Դըստրիկ նազուկ Նոյեմզար,

Տարիիկ սիրով վառ ի վառ

Մոգած է սիրա կուտանաց

Բիւր երանի իր փառաց:

ՀԱՅՐԸ

Ժամ է դըստրիկ ով իմ կոյս,

Արիացիր առ խրախոյս.

Արի մըննենք այս տաճար

Արամազդ վեհ և անձառ

Ուխտիդ զոհին թանկագին

Կու ըստասէ կաթողին:

Հայրը Նոյեմզարի թեւէն բռնած՝ կ'ուզէ մտնենալ
տաճարին. կուտանք կը դիմադրեն, պաշարելով հայրը
կ'աղերսեն ճերադիր:

ԿՈՒՍԱՆՔ

Նոյեմզարի բարի հայր՝

Դեռ քո տարիք վերջին ծայր

Դեռ չէ հասած խոնարհած.

Գըթա հղիւր ողորմած:

Թող սր ծաղիկ մեր ընկեր

Ման գայ մեզ հետ շատ գիշեր.

Եւ շատ արեւ թող մեռնին

Թող քու օրեր երկարին.

Կեանքիդ մանգաղ չի փայլած

Ինչո՞ւ ուխտով կապկըպած

Ողջակիզես ծաղիկ կոյս,

Խեղզես անոր ամէն յոյս:

Հայրը կը տագնապէ, կը շառագունի, լալկան ողբա-
կան դիւրք մը առած գետին կը նայի, և յուզուած պա-
տասխան չի տար:

ՆՈՅԵՄԶԱՐ

Հայր շուարած տեսնուիս,

Գիտցիր ամբողջ իմ հողիս

Վաղուց քեզի զոհեցի.

Խորհուրդս եթէ խելացի

Գընես հայր իմ սիրելի,

Իմ ողջակէզ սըլերալի

Պէտք չէ այսօր կատարել

Այսօր վայել չէ վայել:

ՀԱՅՐԸ

Օր սոսկալի ահաւոր

Ծագեց արեւ մեզ այսօր.

J. W. H. ...

Ոսկերս ամբողջ կը սարսի:
 Նոյեմզար կոյս զերթ հարսի
 Տարփելի է քո այդ ուխտ.
 Դեցանուշի մը հետ ջուխտ
 Այս օր պէտք ես թըռչել վեր,
 Վայլել երկինք երկնից աէր:
 Մի տատանիր ուխտիդ մէջ
 Քեզ կու տաղէ հուր անշէջ:
 Քեզ ըսպասեն աստուածներ
 Լըսէ երկնից հըրաւէր:
 Բարձրանանք արդ սուրբ խորան
 Արծարծենք հոն կրակարան:

Հայրը կը քաշէ Նոյեմզարի թեւէն, զայն կ'ուզէ տանել տաճար. դուստրը կը հակառակի, կը հակառակին կուսանք, հայրը յուսահատ կ'ուզէ դիտաւորութիւնը կատարել: Հնձողները երկուքը միասին կ'երզեն:

ՀՆՁՈՂՔ

Աստուածներու չըքնաղ կոյս,
 Հարս նազելի դեռարոյս,
 Նոյեմզար հարս չերթար հարս:
 Իր խոսպոպներ ոսկի վարս
 Կը տատանին ալէկոծ
 Աչքէն ցայտէ ոսկի բոց.
 Վաշ այդ կոյսին հազար վաշ
 Եւ վաշ սիրոյ մեր վաւաշ:

ՆՈՅԵՄԶԱՐ

Համբերէ հայր լեր գըթած.
 Չէ Արամազդ չար աստուած:
 Թէ ուշանայ մեր նուէր,
 Դրժոխք ըզմեզ չի այրեր:

ՀԱՅՐԸ

Տես Նոյեմզար աչքիս լոյս,
 Ինձի անսա անուշ կոյս.
 Թէ տատանինք քո ուխտին
 Հազար եղուկ մեր բախտին:

ԿՈՒՍԱՆՔ

Ոհ Ինչ թըրթուուն սիրա երերուն
 Ունին հոգիք երկչոսաներուն:

Հայրը այլ եւս ուժգնօրէն կը քաշէ զՆոյեմզար, կ'ուզէ զայն տաճար տանել, բռնի ուխտել տալ: Քուրմը որ մինչեւ նոյն ատեն գլխիկոր կը կենար, այլ եւս ոտքի ելած, բարձրաձայն կը խօսի:

ՔՈՒՐՄ

Թէ կամք կուսին ուխտաւոր,
 Բըռնաբարի կամաւոր,
 Մերժեն աստուածք այդ քո զոհ
 Ուխտդ այդ կ'ըլլայ անհաճոյ:
 Նոյեմզար կոյս տարփելի
 Թող այդ ձեռքը գարշելի:
 Մինչեւ հիմա լըռեցի,

Ես չուզեցի չի բացի
Ճակատադրիդ վիպական
Պատմութիւններ ողբական:

ՆՈՅԵՄՋԱՐ

Երկինք:

ՊԱՐ ԿՈՒՍԱՆԱՑ

Աստուածներ:

ՀԱՅՐԸ

Ոգիներ . . .

ՀՆՁՈՂՔ

Պարիկներ:

ՔՈՒՐՄ

Համբերեցէք դուք մի քիչ

ինչո՞ւ հանէք աղմուկ ճիչ:

Անուանեալդ այդ հայր երբէք

Չէ՛ հայր կուսին սրբոտարեկ:

Հարազատ հօրդ ահաւոր

Վէպըն լըսես կարեւոր:

Հայր անուանեալը կը տաքնապի, կը շառագունի.
կուսանք շուարած ուրախութեամբ իրար կը նային.
Նոյեմզար յուզուած է. հնձողք քմծիծաղով իրար կը
նային:

ՎԵՐՋ ԱՌԱՋԻՆ ԱՐԱՐՈՒԱԾԻՆ

ԱՐԱՐՈՒԱԾ ԵՐԿՐՈՐԴ

Տեսարան՝ Ապողոնի տաճարին ներքինը: Շար ի շար
երկտողանի, գեղաքանդակ խոյակներով և խարխոխնե-
րով սիւներու վրայ նստած է տաճարին ոսկեգրուազ
առաստաղը: Մեհեանին խորը կ'երեւի սրբարանը, հոն
է Ապողոնի խորանը, արձանը նման է ծաղկավիթիթ
անմօրուս պատանիի մը, գլուխը պսակաւոր. ձեռքը
քնար, ոտու ըներուն տակը երաժշտական գործիներ. ամ-
բողջ արձանը համակ ոսկեգօծ. չորս կողմը պար բռնած
է ինը գուսաններու արձանը: Մեհեանին առաջակող-
մը կ'երեւի գաւիթը, որուն կեդրոնը կայ քաւութեան
ջուրի աւազանը: Խորանին առջեւ մէկ տողի վրայ կը տես-
նուին վեց մեծամեծ աշտանակներ, որոնց սկաւառակին
իւրը բոցավառ է: Գիշեր է:

ՏԵՍԱՐԱՆ ԱՌԱՋԻՆ

ՀՐԱՆՈՅՇ, ԱՐՈՒՍԵԱԿ. ասոնք միջահասակ
քրմանոյշներ են, խորանին մօտ: Արուսեակ աստիճան-
ներուն վրայ նստած է. Հրանոյշ կ'արծարծէ աշտանակ-
ներու բոցը:

ՀՐԱՆՈՅՇ

Ա՛խ եթէ մեր սիրտն ըլլար զերկ բիւրեղ,
Պիտի տեսնայինք թէ՛ արցունք հեղեղ
Մեր վըշտի ծովին ինչ հոգեկան բոց
կու տայ արծարծէ հանէ ճիչ ողբոց:

ԱՐՈՒՍԵԱԿ

Համամիտ եմ քեզ, մատաղ թէ հասուն
Ունենանք տարիք, բայց զերդ անասուն
Կ'ապրինք կըրքերով, անշէջ կը պահենք
Հազար մէկ շարիք, կ'ըլլանք ուխտանենդ:

ՀՐԱՆՈՅԵ

Չեմ ես մըտադիր
Ոչ ոք գատելու,
Կ'ողբամ այն պատիր
Ուխտ կոյսին հըլու:

ԱՐՈՒՍԵԱԿ

Ինչո՞ւ դեռ յիշես ուխտ Նոյեմզարի,
Անհոգ լեր քուրիկ այն մընայ արի:

ՀՐԱՆՈՅԵ

Դու դեռ լիովին հոգիս Արուսեակ
Իր քաշածներուն անշուշտ չես տեղեակ.
Երբ իր գէմք տեսնեմ՝ արխուր թալկահար,
Իր գըլխին հասած կ'ողբամ պատահար:

ԱՐՈՒՍԵԱԿ

Քանի խեղահաս մըտքով ողջամիտ
Կ'ուզէ ընդգրկել կուսութիւն վըճիտ,
Տեսնէ աշխարհի նենգաւոր պատարանք
Լաւ է որ իրեն երանի կարդանք:

ՀՐԱՆՈՅԵ

Հաւատա՛ ինձի, կոյսն այն հրապուրիչ
Սըրտին մէջ ունի տագնապ աւերիչ:
Կեղծեց համակամ ըլլալ ողջակէզ,
Այլպէս դեռ կեղծէ ամենուն և քեզ:
Ես գայն դատելու չունիմ բընաւ սիրա,
Քանի մըտածեմ իր ցաւերը բիրա.
Ի՛րա ես կը կոչեմ այն ամէն տանջանք
Որ խըլէ թաղէ կոյսին վայելչանք:

ԱՐՈՒՍԵԱԿ

Թէ չէր մըտադիր գրկել կուսութիւն,
Ինչո՞ւ կուսանաց պարին երգեցող
Չանսաց ու մերժեց անոնց բըճութիւն.
Կըրնայ արդ իր խօսքն ընել ոտնակոխ:

ՀՐԱՆՈՅԵ

Ինչո՞ւ խիստ անգութ մըտածես դատես,
Քանի այն կ'ըլլայ բըճի ողջակէզ:

ԱՐՈՒՍԵԱԿ

Քեզ չեմ հաւատար,
Լեզուդ չէ արկար.
Կոյսն այն իր ուխտին
Կը կապուի հեշտին:

ՀՐԱՆՈՅՇ

Արուսեակ՝ մըտիկ ըրէ՝ պատմածներուս ա-
(ղեխարշ:

Յայտնելով Նոյեմզարայ աղիողորմ՝ ողբ կա-
(կան,

Սոսկալով պիտի ողբաս անոր չըքնաղ կու-
(սութիւն:

Գիշերներն ան միշտ արթուն լալահառաչ
(կ'անցընէ:

Սըրտաթունդ ես հըսկեցի սըրտածըմլիկ իր
(հոգին:

Իրեն հեա ես քուն չեղայ, ծածուկ լաջի կու-
(ծեցի:

Ողբացի իր կուսութիւն՝ սըրտին կըրակ
(բըռնկած:

Մինչ համայն պարք բըրմականք և բըր-
(մանոյշք կը նընջեն,

Նոյեմզար ամէն գիշեր պատուհանին քով
(նըստած,

Հրաշագեղ երկնից կամար ձեռն ի ծընօտ
(գիտէ լայ:

Հառաչէ և իր կոծով աստըղ լուսին լացընէ:
Ճառագայթ արծաթահիւս թափէ լուսնակ
(կուսին վրայ,

Շողշողան տըժգոյն փայլակ անոր այտեր
(պերճագեղ:

Ընդերկար հեղահամբոյր հինինալով մըրմընջէ
Թափթըփեն կայլակ բիւրեղ ականողիքն իր
(ծաւի:

Հեկեկանքն հառաչակոծ մութին առթեն տը-
(խրութիւն

Մաղձոտի ուխտատեղիս օրօրներով սըրտա-
(բեկ:

Ասաըղներ, երկնից աչեր ճօճ ճեմելով կ'ար-
(շաւեն,

Կ'արշաւէր և սըրտիս մէջ մաղձոտութիւն
(այն կոյսին:

Ընդերկար երկու գիշեր ես զիտեցի այն
(պատկեր:

Հառաչներ Նոյեմզարայ զիս քարուքանդ
(ճըմլեցին:

Այս գիշեր ալ անժուժկալ չի զըսպեցի ես
(ինքզինքս:

Անշըշուկ յոտն ի մաաըն կուսին դրան մօ-
(տեցայ:

Լըռութիւն մեռելական անոր կոծով կը յու-
(գուէր:

Կը յուզէր անոր հառաչ զիմ դիւրագգած
(փափուկ սիրտ:

Հե ի հե շունչ քաշելով, հետաքըրբիր սըր-
(տատրոփ,

Ունկընդիր եղայ կոյսին այրած սըրտին ող-
 (բերուն:
 Ըզգացի թէ սասանին համայն շինուածք
 (սըրբազան,
 Ուժգնօրէն զարնուեցայ զըրան կուսին շըւա-
 (բած.
 Նոյեմզար ահաբեկած քաշեց իր ձայն տը-
 (խրանոյշ.
 Պատահարս այս ահամայ խիստ զայրացուց
 (իւր տագնապ.
 Գըլծացի ու ձայնեցի. բաց Նոյեմզար, դուռը
 (բաց:
 Մըտայ ներս, ողջագուրուած համբուրեցի
 (իւր այտեր.
 Նա կարծեց թէ աստուածներ առաքեցին
 (զիս իրեն.
 Շըւարած, արձանացած, երկար զիրար զի-
 (տեցինք.
 Կայլակներ գլորտըկելով, բերան բացաւ ու
 (հարցուց.
 « Երկնառաք, հոգի նագուկ՝ հըրատոչոր
 (հարցերուս
 Պատասխան արդեօք բերի՞ր, հոգիս սիրես
 (ախ ասա՛ »:
 Երկնային չեմ ես հոգի-ըսի կուսին նա-
 (զելի - ,

Լըսեցի սըրտիդ հառաչքն, ըսփոփելու քեզ
 (հասայ.
 Քեզի պէս, վիճակակից քըրմանոյշ եմ սոս-
 (կական.
 Աստուածներ ինձ չեն տըւած գուշակութեան
 (սուրբ հոգի.
 Չեմ գիտեր թէ ինչ երկինք սահմանած է
 (հէք բաղդիդ.
 Խըղձացի քեզ կոյս սիրուն, ըսփոփելու քեզ
 (հասայ.
 Կուսակրօն այս վիճակիս փորձառու եմ ի
 (վաղուց.
 Աներկիւզ, անկեղծօրէն կըրնաս վըշտերդ ինձ
 (պատմել.
 Շանթահար դիտտապաստ թող սատակէ
 (զիս երկին,
 Գաղտնապահ թէ չի մընամ քեզ Նոյեմզար
 (նագելի:
 Նա բացաւ իր աչուրներ, խորը սըրտիս թա-
 (փանցեց.
 Լուսնակի շողով արծաթ տեսաւ վըճիա իմ
 (աչեր.
 Կաթիլներ արցունքներու տեսաւ կախուած
 (բիբերէս,
 Ըմբընեց որ կաթոզին կ'ուզեմ զինքը ըս-
 (փոփել:

Հառաչեց աղիողորմ սարսուռ գորով ինձ
(առթեց.
Վարդապետ փափկիկ շքթուներն շարժելով
(նա պատմեց.
« Անահիտ աստուածուհին ըզքեզ յըզեց կոյս
(ընկեր.
Կացութիւնս անտանելի, հիւժէ լափէ խեղճ
(հոգիս.
Ըստփոփանք միակ զօրեղ է հառաչեցն ու կոծել:
Էի վարդ գեղարուսիկ՝ բողբոջ մանգաղ զիս
(կըտրեց,
Վաղահաս թարշամեցայ, ընկայ անել այս
(ղընաան.
Աստուածներ թէ ունին սիրտ, թող գատաս-
(տանըս կըտրեն:
Գերազանց քան զամէն կեանք, ընտրեմ ես
(միշտ կուսութիւն.
Ողջակէզ կ'ուզեմ ըլլալ նըւերական կոյս
(մընալ.
Թէ ըսես ուրեմն ինչո՞ւ կոծեմ կ'ողբամ արդ
(վիճակս.
Պատճառներ գաղտնի ծածուկ կան սիրելի
(քըրմանոյշ:
Անդրասին ի տղայ տիոց ես սիրեցի կոյս
(մընալ.

Տենչալի իմ ընկերներ, պարք կուսանաց
(զըւարթունք
Խընդրեցին սիրել զաշխարհ, պարել երգել ու
(վայլել.
Անպատում սիրատարփիկ անմեղ օրեր ման-
(կութեանս
Վաղընդփոյթ ցընդեցան թոան, գըրոյ ինք-
(զինքս ընդ առաջ
Սոսկալի ասպագային. ես ուխտեցի յաւիտեան
Պաշտօնեայ աստուածներուն ըլլալ մընալ
(գիցանոյշ.
Այն պահուն՝ մինչ զիմէի ողջակիզի սուրբ
(խորան,
Աստուածներ թէ չար ոգիք բօթ գութեցին,
(շանթահար.
Իմացայ մարդն այն որ զիս աստուածներու
(նըւերէր,
Չէր իմ հայր, ունէի այլ հայր հարազատ
(խըղճալի:
Թաւկահար գետին ընկայ, մինչ լըտեցի այդ
(սեւ բօթ.
Ինչ եղաւ այն քուրմ գութկան, ես չեմ
(յիշեր ոչ մէկ բան,
Խանգարուած, մըտքով մուրար մինչդեռ բացի
(աչերս հոս,

Ձի տեսայ ոչ այն գուժկան, ոչ այրըն հայր
(կարծեցեալ:

Ասա դու կոյս դիցանոյշ, ասա ինչպէս չող-
(բամ լամ.

Քանի սուրբ սըրտիս իրած, ընկած տես-
(նեմ ես զիս հոս »:

ԱՐՈՒՍԵԱԿ

Բաւ է Հըրանոյշ այդ քո պատմութիւն,

Ալ ինչո՞ւ ընեմ անխոհեմութիւն.

Առանց գիտնալու չեմ դատեր ոչ ոք,

Մենք փըրկենք այդ կոյս, չի մընանք անհոգ:

Քուրմերու ախտն է ծածկել ամէն բան.

Դեռ կարծեն ըզմեզ անմիտ ու անբան:

ՀՐԱՆՈՅՇ

Դու անհոգ եղիր դիցանող թուրիկ,

Այս դէպքին վըրայ պայթի փոթորիկ:

ԱՐՈՒՍԵԱԿ

Եւ ինչպէս:

ՀՐԱՆՈՅՇ

Գըթալով կուսին ահեղ կացութեան,

Ուզեցի գըտնել ճամբան փըրկութեան.

Պատահարք ամէն կուսին անձանթ,

Ձիս չի թողուցին անհոգ անշըփոթ:

Հասնիլ գէպ ի այն սուրբ գաշա
Ուր հոգիներ ապրին հաշա:

ՔՐՄԱՊԵՏ

Ուխտաւոր, նախանձելի սենիս հոգի, նըպա-
(տակ,

Անթի անտարակոյս կը տանջըբիս սո-
(վարեկ.

Քըրմանոյշ դու Հըրանոյշ գուխտաւորն տար
(ճաշարան

Խընամէ հոգա իր պէտք թող չի մընայ անթի:

ՈՒԽՏԱԻՈՐ

Ես քաղցած եմ միայն երկնից

Ձիս ըսիփոզ շընորհքներուն:

Ձեր աղօթից հաղորակից

Կ'ըլլայ իմ սիրտըս գալարուն:

ՔՈՒՐՄԵՐ

Յտոաջ վարենք ուխտի հանդէս,

Կասկածք ամէն բըլան անտես.

Յտոաջ Քըրմապետ

Ժամ չունինք անպէտ:

ՔՐՄԱՊԵՏ

Մատիր ինծի Նոյեմզար,

Մատիր խորան փըրկարար:

ՆՈՅԵՄՁԱՐ

Հասատուն և անասան կը դիմադրեմ
(քու կամքիդ,

կուսութեան ուխտիս հանդէս պէտք չէ ան-
(ցնի խեղճօրէն:

Քրքմապես յետաձրդէ ուրիշ օրուան այս
(հանդէս,

Մինչև գան, ներկայ ըլլան իմ մերձաւորք
(և ծընողք:

ՔՈՒՐՄԵՐ

Կ'երևի կոյս Նոյեմզարն յեղաշրջած է իր
(միտք:

ՆՈՅԵՄՁԱՐ

Կուսութիւն նըւիրական, կեանք մենաւոր
(հոգեկան

կը յարգեմ, գերապասեմ վեր քան զամէն
(վայելչանք:

Բայց կ'ուզեմ ուխտիս հանդէս չի կատա-
(րուած, նենգաւոր,

Ահաւոր կեղծիք, զազանիք մերկացընել ան-
(խընայ:

ՔՈՒՐՄԵՐ

Ապողոն գուշակ Աստուած, բեզ կը կոչէ օ-
(րիորդ,

Յանդիման աստուածներուն չի կայ գաղ-
(անիք նենգութիւն.

Նոյեմզար կասկածներով մի բըռնկիւր չա-
(րաչար.

Ծերունին մեր քրքմապես բարւոյդ ցան-
(կայ կաթողին.

Ոնկընդիր լեր խօսքերուն, ախ մի զըրժեր
(կուսութեան:

Արի ել մասիր իրեն, ուխտիդ գաշինք հաս-
ատէ.

Իսկ եթէ յօժարակամ չես ընդունիր սուրբ
(կապանք,

Սիրաբլ բաց, յայտնի խօսէ, ցըրուինք փու-
(թով մեր գործին:

ՆՈՅԵՄՁԱՐ

Ապողոն աստուած բարի, թէ ձայնս անոյշ
(չի հընչեց,

Թէ երկինք ինծի համար կ'ուզէ մնալ մունջ
(ու խուլ.

Ճարահատ և յուսաբեկ զարձեալ քեզի կը
(դիմեմ.

Կաթկըթէ հէք զըլխիս մէջ շընորհք ճար-
(տար խօսելու,

Կապանքներ լեզուիս անշարժ խըզէ կըսրէ՛
(ով աստուած.

Ամբացուր սրբախա լարեր , արդարութիւն
(երկնային
Զիս մըղէ խայտառակել քրմականաց վաս
(ակումբ :

ՔՐՄԱՊԵՏ

Սանձարձակ լըկախօրէն կ'ուզես խօսիլ Նո~
(յեմզար ,
Ա՛լ յայտնի , կամիս ցոյց տալ ըմբոստու~
(թիւն մանկական :
Պաշտօնեայք , լաւ է թողուլ յետաձրդել այս
(հանդէս :
Հեռացի՛ր՝ կոյս Նոյեմզար , առանձնաղիր ու
(խոկա ,
Մոռացիր այլոց գործեր , անձիդ մեղքեր զու
(քաւէ :

ՆՈՅՆՄՁԱՐ

Պատգամէ , ու՛ Ապողոն , խայտառակէ մի
(գըլթար ,
Արժան է , որ այս ակումբ վլլէ իյնայ շան~
(թահար :
Աստուածներ ալ հերիք է , պաշտօնեաներ
(կեղծաւոր
Անմա՛հին այս սուրբ տաճար ինչո՞ւ պրղծեն
(նենդութեամբ :

Ապողոն , խօսէ գոռա՛ , բաց մերկացուր ա~
(սոնց սիրտ ,
Հանրութիւն տեսնէ ասոնց արդմտա զագիր
(գարշանքներ :

ՔՐՄԱՊԵՏ

Խեղագար ու բըղընկած չի կըշներ կոյսն իր
(խօսքեր .
Անհաճոյ է աստուածոց հիւանդ հոգւոց
(ողջակէզ .
Հեռանա՛նք մինչեւ զագրի մոլեգնութիւն խեղճ
(կոյսին :

ՈՒԽՏԱԻՈՐ

Քըրմապեա հառաչներուս Ապողոնի լը՛ր
(թարգման :

ՔՐՄԱՊԵՏ

Աստուածներ՝ գըլթած բարի , ձայնը խեղճիդ
(թող լըսեն :

ՈՒԽՏԱԻՈՐ

Պիտի տա՛ս , ու՛ Ապողոն , սիրտ ու լեզու
(բումբիւնոց :
Վրէժխնդիր արդարութեանդ՝ երկինք եղի՛ր
(այս ժամուս .
Օն գըլթա՛ ու՛ Ապողոն , իմ պատմութիւն
(ողբերգու

Մեղմանոյշ քո սրբինգով սուչէ ցաւերս ա-
(հաւոր.
Թող լրսեն այս բըրմականք ու թող հեծէ
(սուրբ տաճարս:

Լուսթիւնը կը տիրէ, պահ մը այդ ուխտաւորը յու-
զուած չի կրնար խօսիլ. տաճարկանք խորանին վրայ
բարձրացած, Ապողոնի արձանին ուշադիր, կը սպասեն
անոր յայտնի պատգամներուն: Ուխտաւորը դարձեալ
առաջ կը վարէ իր խօսքերը:

ՈՒԽՏԱՒՈՐ

Ուժաթափ ու քայքայուած փըռուիմ գետին
(Ապողոն,

Ըսպասին տաճարականք պատգամներուդ
(երկնային.

Տարիներ յաւերժական մորմնըցայ անխրնայ.
Գըթա՛ արդ, Ապողոն վեհ, արդարութեան
(Նատագով:

Դրսէն կը լսուի Նոյեմզարի կուսանաց խմբի երգը:

ՊԱՐՔ ԿՈՒՍԱՆԱՑ

Դաշտեր ձորեր կրարեցինք,
Քեզ Նոյեմզար խընդրեցինք.

Ոչ անտառներ ոչ սարեր
Մեր արցունքներ չեն կրարեր:

Լացինք լացինք ողբազին

Ըզքեզ լացինք դառնազին:

ՆՈՅԵՄԶԱՐ

Ոհ երկինք, ձայնը լրսեմ իմ պաշտելի
(կոյսերուն ...

Օն արիք պարք կուսանաց տեսնեմ երկինք
(ինձ գըթած:

Կը վազէ որ տաճարին դուռը բանայ. և ահա քրմա-
պետը կը սաստէ:

ՔՐՄԱՊԵՏ

Տաճարէս հեռացուցէք այդ խելագար Նոյեմ-
(զար:

Նոյեմզար արդէն իսկ դեռ քրմապետին վճռին ան-
լուր, տաճարի դուռը բացած է. կուսանք ներս խու-
ժեւով, կ'երգեն:

ՏԵՍԱՐԱՆ ՀԻՆԳԵՐՈՐԴ

ՊԱՐՔ ԿՈՒՍԱՆԱՑ

Հրաշալի այս անակընկալ

Պարզեւեն դէք ամենակալ:

ՆՈՅԵՄԶԱՐ

Ահա տեսնեմ յոյսերուս

Փայլուն ծագի արշալոյս:

Եկէք կուսանք փարելիք,

Տեսնեմ գաղանիք հրաշալիք:

Կուսանք երբ կը տեսնեն աղքատին զգեստներով
ջլատուած ուխտաւորը, ահագնագոչ հիացումով վրան
կ'էյնան, և կը խօսին:

ՊԱՐՔ ԿՈՒՍԱՆԱՑ

Անպատում ընթանչելիք դու կազմեցիր մեզ
(երկինք.

Անհամբեր տըղայամիա ինչո՞ւ անէծք կը
(կարգանք.

Մինչդեռ դիք հիւսեն դարանք անիրաւաց
(հէք գըլիին:

Նոյեմզար, հըրճուէ խայտա՛ իրաւացի գըւ-
նես դատ.

Փառք երկնից և աստուածոց պէտք ենք
(կարգալ սըրտայոյզ:

Նոյեմզար շանթ աչերով քըմապետին տա-
(ղէ աչք.

Դարաններ աստուածահիւս յաղթանակեն
(քաջարար.

Մի գողար, մի սասանիր քըրմապետ վաս
(նենդաւոր.

Բիւր բանակ հէք խումբերուզ քեզ ազապել
(չեն կարող.

Աստուածոց ընկար ծուղակ փախիր թաքիր
թէ կըրնաս:

Քըմապետը շառագունած, սակայն լուռ ու մունջ
մտիկ կ'ընէ այդ խօսքերը: Մի և նոյն ատեն Նոյեմ-
զար ուժգին թափով կ'երթայ կ'իջնայ ուխտաւորին
Վրայ ու լալկան ձայնով կը խօսի:

ՆՈՅԵՄԶԱՐ

Յայտնէ ինքզինքդ ուխտաւոր

Վէպըդ պատմէ ահաւոր:

ՈՒՒՏԱԻՈՐ

Անասան ու անխըռով մըտիկ ըրէ քըրմապետ.

Այս ժամուս կ'սպասէի. փառք երկընքին
(որ շնորհեց:

Կազմեցինք դաւադրութիւն, արդար և սուրբ
(դարաններ.

Աստուածներ մինչեւ մէկ կէտ կը համբերեն
(վատերուն.

Ահուելի, գըթոխըմբեր գըտնըւեցար սըրբա-
(պիղծ.

Քըմապետ, քեզի կ'ուղղեմ իմ այս հրաշէկ
(գտն լեզուս.

Անխընայ մերկացընեմ հոգւոյդ զազիր դար-
(շանքներ.

Լըսեցէք դուք քըրմականք՝ քըրմապետին
(ոճիրներ:

ՔՐՄԱՊԵՏ

Նեաէ երկինք, թափէ կայծակ

Տաղէ բերան այս համարձակ:

ՈՒՒՏԱԻՈՐ

Մի պըղծեր, ոյլ ժանտափուս, արդարութիւն
(աստուածոց:

Ոճիրներդ ինքնին երկինք պախարակէ այս
(ժամուս .

Աղօթէ որ խորխորատ բացուի թաղէ քո զիակ :
Թէ զըղձաս , բանաս բերանդ և ոճիրներդ
(Թափես ,

Ապողոն քեզ կը գրթայ , և կ'ազատէ զը-
(ժուրքէն :

ՔՐՄԱՊԵՏ

Կամիս յայս յայտնի , կ'ուզես ուխտաւոր
Ճակատի շրպրտել կեղծիք նենգաւոր :

Սուրբ է այս տաճար . քս սուս խօսքերով
Ինչո՞ւ յանդրգնիս , սըսես անխրոտ :

Արիք ընկերներ , թողունք զինքն ազատ
Իր քով թող մընայ կոյսն իւր հարազատ . . .

Կը շտապէ , փախուստ կու տայ . քրմականք ապշած
Կը մնան , սակայն կուսանաց պարը երգելով՝ անոր թեւ-
էն կը բռնեն , շեն թողուր որ փախչի :

ՊԱՐՔ ԿՈՒՍՍՆԱՅ

Կը փախչիս և ուր ծածկիս պատուոյդ դամ-
(բան դու փորես :

Ուխտաւոր ժամը հասաւ , պատմէ կոյսին
(պատմութիւն :

ՆՈՅՆՄՁԱՐ

Բարի , քաղցրիկ Ուխտաւոր ,

Որոշ պատմէ , ահաւոր

Հոս իյնալուս պատմութիւն :

Քրմապետին խաղքութիւն

Ինձ ծանօթ է սակաւիկ :

Դուք քրմականք մի ցաւիք

Երբոր լրտէք ձեր պետին

Արարքները հրէշային :

ՈՒԽՏԱԻՈՐ

Կը տեսնեմ քրմացն ախումբ , քրմապետին
(ոճիրին

Անտեղեակ և անծանօթ . աստուածային պաշ-
(տօնեայք

Արդ զիտցիք թէ ձեր աւագ , կուտեց զլիւին
(անէծքներ :

Սպաննութիւն չէ իր ոճիրն , այլ նենգութիւն
(ըստորին .

Խօսք զըրաւ , Նոյեմզարայ ոչ հարազատ
(հօրը հետ .

Աննելով զըրամ՝ առատ , Ապողոնի կեղծեց
(խօսք :

Այն ատեն , մինչ համարձակ հօր պատմու-
(թիւն այս կոյսին

Ըսկըսայ պարզել մեկին , Ապողոնէն սուս
(պատգամ՝

Որոտաց այս քրմապետ , ուզեց խարդախ
(զիս հանել :

Եւ շատեր հաւատացին անունկրնդիր ինձ
(եղան.

Թաւկացած կոյս Նոյեմզար, խըլեցին հոս
(նեակեցին.

Ես և պար այս կուսանաց տաճարներէ ի
(տաճար

Ման գալով փընտոեցինք մեր կոյս նազելի
(Նոյեմզար.

Ծածկարար հեռացուցին, չի գիտցանք ո՞ւր
(ընկաւ ան.

Ուզեցինք արդարութեան վըրէժխընդիր մը-
(նալ միշտ-

Չի լըքանք որոնեցինք, նենգութեան զոհ
(այս կուսան.

Ապողոն ծագեց մեզ լոյս, առաջնորդեց այս
(տաճար.

Հըրանոյշ եղաւ գործիք, աստուածային յայտ-
(նութեան:

ՔՐՄԱՊԵՏ

Թափէ երկինք հուր կայծակ,

Լափէ հոգիքս այս պիծակ:

Ոչ թէ միայն թըշնամիք

Այլ և կուսանք այս ոսմիկ.

Դարաններով այլանդակ,

Պատիւս առնեն ոտքի տակ:

ՊԱՐՔ ԿՈՒՍԱՆԱՑ

Լըռէ կարկէ չամընչցած,

Գիտցիր վերը կայ աստուած.

Դեռ յանդընիս, զինքդ արլար

Կեղծես լեզուովըդ ճարտար:

Յառաջ սիրուն ուխտաւոր

Բաց անոր սիրան ախտաւոր:

ՔՈՒՐՄԵՐ

Շըւարած, քեզ Ապողոն, կարդանք լոյս տուր
(մեր մըւքին.

Յաղթութիւն արդարութեան կը պարգեւեն
(աստուածներ:

ՈՒՆՏԱԻՈՐ

Ես տեսայ որ աստուածներ են աջակից
(խեղճերուն.

Նոյեմզար որբիկ նազիկ տեսաւ երկինքն իր
(պաշտպան.

Տարուբեր փոթորկալից օրեր անցուց դառ-
(նազին,

Հուսկ ապա, խըղճաց աստուած յայտնեց
(անթիւ գաղանիքներ.

Գըրմապետ եղիր արդար ըսէ ինչո՞ւ Նոյեմզար
Խըլեցիք, հոս բանաեցիք. յիշէ երկինք, խօ-

(սէ ճիշդ:

ՔՐՄԱՊԵՏ

Թողուցէք որ հեռանամ, նախատինքներ
 (կոշտ ու բիրտ
 Սեցուցին անբիծ հոգիս. վըրէժիւնդիր իմ
 (փառաց
 կը մերժեմ զըրպարաութիւն, զոր չեն խնա-
 (յեր արդ ինծի:
 Ամընչցիր կեզծ ուխտաւոր, չափ գիր լե-
 (զուիդ զըժպըհի

ՈՒԽՏԱԻՈՐ

Ապողոն պատգամատու, արդար կըտրէ՛ գա-
 (տաստան.
 Եւ ի սէր անարատին Նոյեմզարայ պերճանոյշ,
 Որոտա՛ յայտնէ պայծառ ողբերգու վէպը
 (կոյսին:

ՊԱՐՔ ԿՈՒՍԱՆԱՑ

Դատը կուսին, օն և օն,
 Արդար կըտրէ Ապողոն:

ՆՈՅՆՄՁԱՐ

Սըրտածըմլիկ, փափկանազ,
 Երգեն հոգիք, կու տան վազ:
 Պայծառ տեսիլ աչերուս՝
 Վառէ երկինք կու տայ յոյս:

ՀՐԱՆՈՅԵ

Ես նըշմարեմ մանկիկներ
 Շարժեն իրենց թեւիկներ,
 Թըռչին ճախրեն հոս հասնին,
 Ապողոնի վեհագնին.
 Երգեն տաւիդ թըրթըռուն,
 Մընչել կու տան ամպերուն:

ԱՐՈՒՍԵԱԿ

Տեսէք ինչպէս մեր աստուած,
 Կ'անու պատկեր գըրպրուած.
 Կարծես կըրէ վիշտ ուժգին,
 Հեծէ իր սիրա և հոգին:

ՈՒԽՏԱԻՈՐ

Սըրտատրոփ, պատգամներուդ կը սպասենք,
 (ո՛վ Ապողոն.
 Ախր գըթա՛ այս ակումբիս, գաղանիքներուն
 (պատուէ բող:

Տաճարին մէջ կը լեցուի դիւթական, սահմուտդ ե-
 րաժշտական ներդաշնակ աղմուկ մը. ամբողջ տաճա-
 րականք ահաբեկած դէպ ի երկինք կը նային. այլա-
 լած են ոմանք, կը գողգողան, մանաւանդ քրմականք:

ՆՈՅՆՄՁԱՐ

Թըռչի հոգիս երակներէս,
 Կին մը տեսնեմ կըրակ երես.
 Խարտեաշ երկայն ունի մազեր,

Դէմքով ցոյց տայ հազար նազեր,
Ձիս կը դրաւ այդ կին բարի
Հոգիս թըռչի իրեն փարի:

ՀՐԱՆՈՅՇ

Նոյնպէս տեսնեմ ես Նոյեմզար,
Այդ կին և իր նազեր հազար:

ՈՒՍՏԱՒՈՐ

Հըրաշահիս տեսիլ երկինք,
Բանաս և մենք կ'ահարեկինք:
Դո՛ւ ես ասո՛ւ ... ախ կը սոսկամ.
Դու ինձ ըսիր որ ես հոս գամ:
Արդ ցոյց կու տաս մեզի անուրջ.
Վանէ գաղտնիք պատող մեր շուրջ:

Տաճարը կը լեցուի կնգուկներու հոտով. խորանին
ճրագներու բոցը կը տփգունի, խունկերու ձուխին մէջ
քողարկեալ պատկերի կերպարանք մը կ'առնէ տաճա-
րականներու յափշտակուած դիւրբը: Եւ ամէնքը բերա-
նարաց, ուշագրաւ մտիկ կ'ընեն: Անտես կնոջ մը ձայնը
կը լսուի:

ԿԻՆԸ

Ապողոն, գերեզմանէս զիս կոչեցիր բերիւր հոս.
Աստուածոց ծանօթ վիպակ կ'ուզես հընչեմ
(որ լըսեն

Հարազատք իմ փարեղիք, իրենց անկեղծ
(սիրեղիք:

Մ'այլայլիւր կոյս Նոյեմզար, զիս որ տես
(նես չեմ օտար ...

Օն գրիէ այդ Ուխտաւոր մինչեւ վերջ տամ
(իմ վէպին:

Լըոնցէ՛ք, կը հեռանամ թէ խափանէք իմ
(խօսքեր:

Բըննցէք հանդարտ ձեր սիրա, մի լաք
(արցունք մի թափէք:

Սիրեցին զիք ամենայն պաշտպանեցին ձեր
(սուրբ գաս:

Նազելի կար մի կուտան, դէմքով սիրով
(գըրաւիչ:

Ապագան իրեն համար էր խառուտիկ հո-
(րիզոն:

Հասաւ օրը հարսնութեան, արւին իրեն ժանտ
(մի այր:

Քըրմական ըսաւ օրինի՛ հարսանեկան հան-
(զիսին

Հարս եղաւ կոյսն այն աչեղ երիտասարդ
մէկ քուրմի,

Սըրբազան ամուսնութիւն՝ իրեն արւաւ մի
(աղջիկ,

Սիրեց մայրն իր այդ փափկիկ չըքնազագեղն
(անկրանիկ .

Սակայն այրը ժանտափուտ զայն միշտ ա-
(տեց հալածեց :

Ընդերկար երկրիս վըրայ չապրեցաւ մայրը
(կուսին ,

Տընական կազ և կըռիւ շուտ փորեցին իր
(դամբան ,

Խամբեցաւ գեռատի հարս , մայրը կուսին
(նազելի :

Կոյնն որբիկ՝ հասակ առաւ , եղաւ ծագիկ
(աննըման ,

Չի յիշեց որ մայր մ՝ ունէր իրեն վըրայ
(գուրգրացող .

Որբ մընաց թըշուառ մեծցաւ , կըրեց խորթ
(հօր լըլկանքներ .

Մօրն էրիկ զինքըր ատեց . այն կոյնն որբիկ
(հիւժեցաւ .

Իր խորթ հայրը սուտ պատգամ քըրմա-
(պեաէն զընելով ,

Նազուկ կոյնն ինկաւ աննիւ ահեղ զընտան
(քըրմական :

Քրմականք զայրագին կը նային քրմակտին . մին
խորանի աշտանակը առած , անոր գլխին կ'իջեցընէ , նա
արդէն իսկ խաղբուծենէն թալկահար կը տապալուելի

խորանին առջև : Նոյեմզար և Ռեխտաւոր իրարու
պլլուած հառաչներով կու լան . կ'արտասուեն և կու-
սանք , սակայն ոչ ոք բերան կը բանայ , կը վախեն որ
խօսող աներեւոյթ կէնը իր սպանալիքին հաւատարիմ
մնալով կը լուէ չի խօսիր : Կը շարունակէ .

Մենաւոր , արդար հոգի , իմ . . . սիրելի
(սիրուն քուրմ

Յայտ յայտնի գիտեր խորթ հօր ըրածնե-
(ներուն մեծ սրտճառ :

Այն խորթ հայրն վաճառելով կընոջն ազ-
(ջիկ , ախրացաւ

Ինչքերուն , հարըստութեան , ինչ որ ունէր
(կոյսին . . . մայր :

Սրտախօս այն քըրմապետ առաւ ըստակ
(ինչքերէն :

Մենաւոր այն բարի քուրմ տեսաւ այդ գործ
(սոսկացաւ

Հովանի եղաւ կոյսին զի ինքն էր հայր հա-
(րազատ . . .

Երկնային այս յայտնութեան վրայ Ռեխտաւորը ,
կոյնն Նոյեմզար , ընկերուհիք և դեցանոյշք սիրելիք ,
թալկահար , լեզունին բռնուած գետին կ'իյնան , արցունք-
նին սառած է աչուըներնուն վրայ : Ռե հազիւ քրմականք
կը բացագանչեն :

ՔՐՄԱԿԱՆՔ

Երկինք . . .

ՎԵՐՋ ԵՐԿՐՈՐԴ ԱՐԱՐՈՒԱԾԻՆ

ԵՐՐՈՐԴ ԱՐԱՐՈՒԱԾ

Տեսարանն է նուիրական պարտեզ մը. ձիթենիներու խիտ անտառը շրջապատած է ընդարձակ դաշտ մը, որուն կեդրոնը բարձրացած է բարձրաւանդակ բեմ մը, գեղեցիկ աստիճաններով, քառակուսի կամարակապ շէնք մը, որուն վրայ փռուած է սպիտակ ծածկոց մը, եզերքները ոսկի ծոպերով: Կամարակապներու սիւները գեղաքանդակ են. խոյակները ոսկեզօծ. բեմին կեդրոնը կայ բազկաթոռ մը, որուն վրայ իբրեւ ամպհովանի կ'երեւի արծաթագօծ թեւատարած արծիւ մը, աչուքները ազամանդաշող: Կազկաթոռին առջեւը գետեղուած է զոհարերութեան ատրուշան մը: Այդ բարձրաւանդակ բեմին երկու կողմը կան մէկ մէկ աւազան. որոնք շրջապատուած են սրբատաշ, դեղին, կարմիր քարերէ՝ պերճատեսիլ, բոլորաձեւ չորս աստիճաններով: Աւազաններու կեդրոնը կը գտնուի վիշապ մը, որուն աչուքներէն, ականջներէն ու բերնէն ջուրը կը ֆշայ: Բեմին ճակատի աստիճաններուն աջ կողմը կը գտնուի Անահտայ արձանը. իսկ ձախ կողմը Ապողոսները: Ոսկեծղի Անահիտը կը կրէ սպիտակ վարդերու պսակ մը, իսկ Ապողոսի ձեռքը տուած են ձիթենիի ճիւղ մը: Աջակողմը կը տեսնուի Ապողոսի տաճարին ճակատը, իր սեւ, մեծ դռնով: Ամբողջ դաշտը դալարազարդ է, կանաչ բարձր խոտով, ուր ցանուած կ'երեւին հարսնուկներ, խաշխաշներ: Առաւօտեան արշալոյսի ատենն է:

ՏԵՍԱՐԱՆ ԱՌԱՋԻՆ

Քրմանոյշներ՝ հերարձակ, ճերմակ, երկայն պարեգօտով խումբ խումբ եղած կը մօտենան աւազաններուն, անոնց մէջ կան ծնծղայ, զանգակիկ զարնողներ և քնարահարներ: Կը շարուին աւազաններու առջեւ. ոմանք կը լուան այտերնին, իրարու մազերը կը հիւսեն, ու այլք կ'երգեն:

ՔՐՄԱՆՈՅՇՆԵՐ (աջակողմէն).

Գոցէ աշերդ արեգակ,
 Լըսէ մեր երգ ներդաշնակ.
 Թող սր մեր խումբ համարձակ
 Երգէ խընդայ հերարձակ:
 Ամպեր դարձէք արծաթ մէզ՝
 Արեւուն աչք գոցեցէք:
 Երբ կ'ընէ կոյսն արգուզարդ,
 Շիկնին ամէն հարսնուկ, վարդ:

ՔՐՄԱՆՈՅՇՆԵՐ (ձախակողմէն).

Թաքիր արեւ երբ կուտան,
 Քըսէ այտին բալասան.
 Գոցէ աշերդ ով արեւ
 Թէ կը խըպնիս արդարեւ:

ՔՐՄԱՆՈՅՇՆԵՐ (աջակողմէն)

Երամ երամ հա՛ թըռիք
 Սոխակ, արտոյտ ու սարիկ,

Ձեր երազներ անուշակ՝
Կ'ուզէ լրսել մանիշակ:

ՔՐՄԱՆՈՅՇՆԵՐ (ձախակողմէն)

Լուսնակ մընայ միշտ արթուն,
Լքսէ վէպեր զուարթուն,
Ձոր կը հիւսէ կոյս շուշան,
Աստղեր երբ իր մօտ կ'իջնան:

ՔՐՄԱՆՈՅՇՆԵՐ (աջակողմէն)

Բազդը շոյենք յաւիտեան,
Որ մեզ չըլլայ դաւաճան:
Ձիթենեաց տակ շուքին մէջ
Ծրծենք սուրբ սէր վառ անշէջ.
Երգ օրօրենք ամէն դաշտ,
Միշտ երկնից հետ մընանք հաշտ:

ՔՐՄԱՆՈՅՇՆԵՐ (ձախակողմէն)

Բազդը չըլլար թըշնամի,
Երբ մեր արեւ չի թօշմի:
Սիրենք զաստուած և երկինք,
Ոչ մէկ չարէ չերկընչինք:

ՔՐՄԱՆՈՅՇՆԵՐ (աջակողմէն)

Եզնիկ մեղույշ աչերով՝
Ե՛կ գիտէ մեզ անխրոտով:
Աստեղք ինչո՞ւ տաւարին

Ձայնը լրսեն խաւարին:
Ինչո՞ւ փախչիս արեգակ,
Մինչ կ'ողբերգէ բուխճակ:
Կուտանք կ'ապրին միշտ զուարթ,
Մաղձոտութեան կու տան ջարդ:
ՔՐՄԱՆՈՅՇՆԵՐ (ձախակողմէն)
Կեանքի անուշ մեղեգին,
Կըրնանք լրսել շատ հեշտին,
Արհամարհել թէ գիտնանք,
Գրլիւին հասած մեզ վըտանդ:
Առաւօտեան դու հովիկ,
Ծագիկներէն խատուաիկ՝
Քաղէ ցօղիկ մարգարիս
Փըչէ սրտին մեր վըտիս.
Մեր գլխին վրայ գեղածամ
Թափէ բոյրերբոյ փարթամ:
ՔՐՄԱՆՈՅՇՆԵՐ (աջակողմէն)
Ծագի արեւ վեհափառ,
Սըրսիկ օսկի իր շրպար:
Աշխարհ սիրուն Հայաստան՝
Դառնայ դըրախտ բուրաստան:
Սօսիներու սօսափին՝
Կ'երգէ զարեւըն փաղփին:
Եփրատէն դուրս նունուփար,
Կ'ելլէ գիտէ զարեւ վառ:

Այդ երգերու ատեն կը համնին Նոյեմզար և իր հայրը՝ Ուխտաւորը հետը. բրմանոյշներուն շտեմնուելու համար, կը ծածկուին աւազաններէն ասդին թուփի մը ետեւ:

ՏԵՍԱՐԱՆ ԵՐԿՐՈՐԴ

ՆՈՅԵՄՋԱՐ

Լըսեմ՝ հայր իմ՝ հիացած՝
Չայնը երգոց կուսանաց:

ՈՒԽՏԱԻՈՐ

Անոնց երնէկ կը կարգամ,
Քանի չունին հոգ տարտամ.
Դու ալ ասորէ անոնց պէս,
Երջանկութիւնդ չի խաբես:

ՆՈՅԵՄՋԱՐ

Քանի կեանքն է խաբերայ,
Պիտի արխրիմ՝ աներկբայ:

ՈՒԽՏԱԻՈՐ

Փոյթ տար մեղուր արխրութեան
Ազգեցութիւնը դաժան:
Եղիւր վըշաին համակամ
Բայց ոչ անոր բարեկամ:

ՆՈՅԵՄՋԱՐ

Հուժկու խըրաս կը կարգաս,
Արիութեան կու տաս դաս:

ՈՒԽՏԱԻՈՐ

Նոյեմզար իմ՝ հարազատ,
Քեզ հետ խօսիմ՝ շատ ազատ:
Ձըմեռ չհասած իմ՝ գարուն
Գըլիս թափեց ձիւն անհուն:
Վըշտերը զիս ցընցեցին,
Սիրաբոս ուժգին խոցեցին.
Վիշաը ինձի սորվեցուց
Մարել բազդին վառ դայրուց:

ՆՈՅԵՄՋԱՐ

Բազդը անմիտ թէ չըլլար,
Մարդըս ինչն՝ պիտի լար:
Այլ զօրութիւն անձանօթ,
Երկրիս առթէ մեծ շըլիթ:

Նոյեմզարի նախկին ընկերուհիները՝ Պարբ կուսանաց, յանկարծակի կը խուժեն թատերաբեմէն ներս ու կը նուազեն:

ՏԵՍԱՐԱՆ ԵՐՐՈՐԴ

ՊԱՐԲ ԿՈՒՍԱՆԱՅ

Երնէ՛կ քեզի Նոյեմզար,
Մըբքով կ'ուզես ամէն սար
Գըրկել նետել ծովուն մէջ.
Արեգական բոցն անշէջ

Կ'ուզես շունչովըզ մարել,
Աստուածներու գործ վարել . . .

ՆՈՅՆՄՁԱՐ

Սիրեմ ըզձեզ իմ կուտանք,
Ինչո՞ւ ծաղրէք զիս ասանկ:

ՊԱՐՔ ԿՈՒՍԱՆԱՑ

Անծանօթին հասեւն
Ո՞ր չար ոգիք քեզ մըղեն.
Մեզ անծանօթ մութ գազանիք
Ըմբռնելու չի բրանինք:
Յիշէ ծաղկած քու գարուն,
Սիրէ ձայնը երգերուն:
Եկուր պարէ միասին,
Շատ լուր ունինք քս մասին:

ՔՐՄԱՆՈՅՇՆԵՐ (աջակողմէն)

Արի մեզի Նոյեմզար,
Ձարգարուէ մեզ հաւասար.
Արդուզարգով պերճագեղ,
Պըճնինք այսօր փառահեղ:

ՊԱՐՔ ԿՈՒՍԱՆԱՑ

Մերն է Նոյեմզար, մեր պարին շուշան,
Իր համար կ'այլրին սըրաներ ատրուշան:
Երկինք ալ յայտնեց իր մօր բերանով,

Ուխտին դարաններ. հղիք ապահով՝
Ա՛լ կոյս Նոյեմզար՝ ձեզ հետ չի մընար.
Մեզ հետ գայ կ'երզէ, ուրախ բըռնէ պար:

ՆՈՅՆՄՁԱՐ

Ի դուր մի յոզնիք ընկերք անբաժան,
Ձեր կեանքն ալ զիտցիք, լեղի է գաժան:
Դեռ ձեզ կը խարէ վարդագոյն երազ,
Ես եմ իմ բաղդին մինակ դատախազ:

ՊԱՐՔ ԿՈՒՍԱՆԱՑ

Քեզի խընայէ Նոյեմզար ընկեր,
Պատրանքներու մէջ ինչո՞ւ ես ընկեր:

ՆՈՅՆՄՁԱՐ

Շընորհ երկնաւոր
Պահեց զիս ամուր
Գազափարիս մէջ:
Կենաց հլեւէջ
Այլ եւս ինձ համար
Երազ է տըխմար:

ՏԵՍԱՐԱՆ ՉՈՐՐՈՐԳ

Բարձրաւանդակի բեմէն քուրմերէն մին փողը կը հնչէ.
Գուրբ խոնուած հանդիսականք, ոստիկ ամբողջ նուի-
րական պարտէզի մէջ կը լեցուին: Անահայտ է Ապո-
ղոնի արձաններուն առջեւ կը գտնուին քուրմեր. կը

սկսի զոհաբերութիւնը: Խոյս կու տան Քրմանայէք,
Նոյեմզար և իր հայրը: Հանդիսականներու խումբին
մէջ կան ազբատ քերթողներ, որոնք բամբուկաբար կ'եր-
գեն:

ՔԵՐԹՈՂՆԵՐ

Կըսկըռալով կըրունկի տարմ,
Առաւօտեան ծրծկն ոգ թարմ:
Թըռիք, տարէք օ՛ն սուրհանդակ
Քըրմապետին բօթն այլանդակ:
Մեհնանին վասն այն վարչապետ
Եղաւ գործովը դատափետ:

ԶՈՀԱՐԱՐ ՔՈՒՐՄԵՐ

Քեզ Ապօղոն մայր Անահիտ
Հանդիսականք սըրտով վըճիտ,
Ողջակիզաց քաւիչ ճենճեր
Զոհաբերին երկինքն ի վեր:
Համայն աշխարհ արարատեան,
Եւ քուրմերու մեր սուրբ ատեան
Կը պաղատի արտասուազին,
Մեղքըն քաւել պետին թագին.
Կըտրէ երկինք արպար սուրբ դատ
Դատապարտէ գործերը վատ:

ՀԱՆԳԻՍԱԿԱՆՔ

Անահտայ, նուիրական պարտիզիս մէջ խըմ-
(բուած,

Կաթողին կը պաղատինք գութլ հայցենք
(աստուածոց.

Ուխտաւոր Նոյեմզարայ դատաստանով քըր-
(մապետ

Սահեցաւ, խորտակեցաւ, մեհնական սուրբ
(գահէն.

Սպիկար, մեր սամիկ խումբ, պատգամներուն
(աստուածոց

Կը սպասէ աւագ քուրմի դատապարտումն
(վատ գործին:

ՔԵՐԹՈՂՆԵՐ

Խայտացէք կուսանք, պարն է ձեզ համար
Հանդիսականներ զիզուին անհամար.
Ըմբիշներ յառաջ, գօտէպինդ մըցանք,
Մըղեցէք, ձեզմով մենք կ'ուրախանանք:
Հիւսենք մենք վէպեր, շատը առասպել.
Աշուղին լեզուն ս'ի կըրնայ զըտպել:

Կուսանաց պարը, հոն՝ հանդիսականաց մէջ կը տես-
նեն Նոյեմզարի կեղծ հայրը՝ անոր շուրջը հաւաքած,
զայն կը պախարակեն:

ՊՏՐՔ ԿՈՒՍԱՆԱՑ

Դու ի՞նչ սըրտով խայտառակ,
Ծածկես գործերդ անառակ.
Հոս գըսնուխ այս ժամուս,
Զայրոյթ յուզես ամենուս:

Խորթ հայրը մինչդեռ ինքզինքը արդարացընելու հա-
մար կը պատրաստուի պատասխանելու, ահա տա-
հարի դռնէն կ'որոտայ քրմական փողը. արհաւիրքի
նշան մը կայ անոր ելեւէջներուն մէջ, ժողովուրդը
հասկնալով, ահաբեկած կը գոռայ:

ՀԱՆԴԻՍԱԿԱՆՔ

Դիմադրե՛նք.

Անօրէնք . . .

ՓՈՂԱՀԱՐ ՔՈՒՐՄ

Հայագուռք մի խրոտլիք. կ'ըստպատէիք համա-
(խումբ,

Աստուածներու լըտի պատգամ, ունենալ
(նոր քրմապետ.

Բայց երկինք հրաւէր կարգայ, թողուլ ներ-
(քին մեր գործեր:

Բօթ արխուր, գուժէ արդ մեզ. Հստմ արշաւէ
(մեր վըրայ:

Բանակներ արդէն հասած, կը զըզըրդեն Հա-
(յաստան:

Կամ ի զէն, կամ մազապուրծ պէտք է խոյս
(տալ վրասնդէն:

ՀԱՆԴԻՍԱԿԱՆՔ

Գունդպպունդ, քեզ Ապողոն, զիմենք խըն-
(դրենք լոյս տալ մեզ.

Վատագի ինչո՞ւ ըլլանք, ինչո՞ւ թողունք հայ-
(րենիք.

Պատգամէ՛, քեզ ունիլընդիր կ'ըլլայ համայն
(հայու թիւն:

Հանդիսականաց մեծ մասը կը խուժէ տաճարէն ներս:
Անտառներու մէջէն կը լսուին մուրեալներու ձայներ.
Հայաստանի վրայ արշաւող Անտոնինոսի բանակին մէկ
մասն է որ համբայ կ'ուզէ գտնել: Կուսանաց պարը
բռնելով Նոյեմզարի կեղծ հօր թեւէն կը թաքչին տա-
ճարէն գուրս թատերաբեմին մէկ կողմը, ասոնց հետ կը
թաքչին և այլք: Մուրեալ զօրքերը կ'ազադակեն:

ԶՕՐՔԵՐ (աջակողմէն)

Անէ՛ծք պատերազմին:

ԶՕՐԱՊԵՏ

Յառա՛յ անտըրտունջ:

ԶՕՐՔԵՐ (աջակողմէն)

Կտարենք նիզակ ու սուսեր:

ԶՕՐՔԵՐ (կեդրոնէն)

Ձարբուեցանք ախ ի զուր,
Բաւ է. իրար մըխենք սուր:

ԶՕՐԱՊԵՏ

Դիմազրոզն առնէ պըսակ յաղթական:

ԶՕՐՔԵՐ (կեդրոնէն)

Աշխարհակալ անյազ փափագ,
Կ'անիծենք միշտ մենք ըստամբակ:

Նուածելու տենչ եպերելի
Չարիք առթէ, կոծ ահսելի:

ԶՕՐՔԵՐ (ձախակողմէն)

Աստուածներ հերիք չէ մեր այսքան երկար
(տառապանք.)

Շանթահար կ'ուզենք մեռնիլ, քան ողջ տան~
(ջիւ ընդերկար:

ԶՕՐՔԵՐ (աջակողմէն)

Ուժասպառ, փոռիւնք գետին ջրլատուած:

ԶՕՐԱՊԵՏ

Յառաջ զինուորք քաջարի,
Տեանենք շուտով վերջ չարի:

ԶՕՐՔԵՐ (կեդրոնէն)

Կը խրդդուինք յուսահատ,
Չունինք կորսիլ անվրհատ:

ԶՕՐՔԵՐ (աջակողմէն)

Թեւեր տուէք մեզ աստուածներ,
Յիշեցէք ձեր ըստեղծուածներ.
Փըրկեցէք մեզ տարտաբոսէս
Հըռոմ կանգնէ նոր անդրի ձեզ:

ԶՕՐՔԵՐ (ձախակողմէն)

Յառաջ միշտ զիմենք,
Քանի ունինք յոյս ե զէնք:

Կոյսին հոս անկում ունի ճըշգրբիս
Գաղտնի պատմութիւն: Աղբիւր ճըշմարիտ
Գըտայ հարցուցի, իմացայ կեղծ հօր
Նըպատակ զազիր, ոճիրն ահաւոր:
Յայանցի կոյսին, նա զարհուրեցաւ,
Հիմա արդ կու լայ սըրտին այդ մեծ ցաւ:
Ես քեզ կը պատմիմ իր հոս իյնալուն
Ողբերգու պատճառն որ մընայ թաքուն:
Լըսեմ ոտնաձայն նոյն ինք Նոյեմզար
Ահա դայ խոսված, իրեն հաւատար
Չի կայ մէկ ուրիշ տանջըող ընկեր.
Կարծես վարդ նազուկ հոս քարշ է ընկեր:

Նոյեմզար տեղոյն, քնատ, տարտամ քայլերով կը
մտտենայ Հրանուշին:

ՏԵՍԱՐԱՆ ԵՐԿՐՈՐԳ

ՀՐԱՆՈՅԵ

Մատիւր ինծի փարելի
Կոյս Նոյեմզար սիրելի.
Խօսէ մեզ հետ համարձակ
Սիրաբը բըռնէ ընդարձակ:

ՆՈՅՏԵՄՋԱՐ

Տապանակ անկեղծութեան հասիր ինծի օգ~
(նութեան

Ապաստան բեզի Հրանուշ, կ'ըլլայ հոգիս
(Չախճախուած:

ՀՐԱՆՈՅՏ

Աներկմիա բաց քո բերան,

Մի երկընչիւր այս կոյսէն.

Վըտաահացիւր իր վըրան

Գաղանիք պահելն է իր զէն:

ԱՐՈՒՍԵԱԿ

Տառապեալ կոյս Նոյեմզար, Հըրանուշի և իմ
(մէջ

Ձիք երբէ՛ք խըտիր, գաղանիք. սիրենք զի-
(ըբար կաթոզին,

Համարձակ պատմէ ցաւերդ երկինք թէ բեզ
(չողորմի,

Աղօթքով մենք կը հայցենք, սիրտը կակ-
(ղենք աստուածոց:

ՆՈՅՆՄՁԱՐ

Աստուածներ թող անստան մընան իրենց
(փառաց մէջ.

Անտէրունչ կայսիա համար վաղուց գոցուած
(է երկինք:

Ոչ աղերս և ոչ բողոք սնիմ խաղաղ աս-
(տուածոց.

Ձէր բաւեր հոգիս տանջող գէպքն ահօնի
(հոգեկան,

Դատաստանք կոշա ու կոպիտ ահա լըսեմ
(իմ մասին,

Որ յուզի և բըռնկի ապիկարաց բերնին մէջ:

Վատագի, իժարարոյ կարգ մը լըկտի բըրմ-
(անոյշք

Բամբասեն, թէ ես կամիմ ատել վիճակ
(կուսութեան:

ՀՐԱՆՈՅՏ

Նոյեմզար քուրիկ,

Հերիք են հերիք

Ֆաւերդ անպատում:

Է՞ր ի զուր տըրտում

Ըլլաս ու մնաս.

Վանէ թէ կըրնաս

Երբ որ կը հասնին

Ձըրոյցք քո մասին:

Այլոց բամբասանք,

Անձին գովասանք

Օրէնք է եղած

Ամէն կուսանաց:

ԱՐՈՒՍԵԱԿ

Դու մի վըրդովիր, քուրիկ տառապեալ,

Թէ այլք բամբասեն վատ խօսին վըրադ.

Գիտցիր շատ անգամ կասկածով սըխալ

Կըտրեն գատաստան կ'ըլլան շաղակրատ:

ՆՈՅԵՄՋԱՐ

Արուսեակ զու այդ խօսքով չես կարող զիս
(Համոզել.

Յաւիտեան անէծք բերնին, որ զըրպարտէ
(բամբասէ:

Ես կ'ընարեմ տարաբոսի չար ոգիներ իմ
(ընկեր,

Անոնց հետ մլտերմանալ, զանոնք սիրել
(համբուրել,

Ու յաւէտ ատել այն խումբ կեղծաւորաց
(տրմաբլի

Որ կեղծեն սէր խանդակաթ, սէր ընկերի
(երկնային,

Բամբասեն, կը զըրպարտեն սիրեն մըրել
(զուրիշներ,

Ու պատիւ ընկերներուն պրզծեն կ'ընեն
(ոտնակոխ:

ՀՐԱՆՈՅՇ

Հերիք չե՞ն, կոյս Նոյեմզար, ցաւերբդ բիւր
(տոսկալի.

Ողջամիտ խըրոխտ մըաքով ինչ որ լըսես
(անախործ

Փոյթ մ'ըներ, արհամարհէ, փափուկ սրբալոյ
(խընայէ:

ԱՐՈՒՍԵԱԿ

Քանի ընտրես կուսութիւն,
Շատ նախատինք, քրտութիւն,

Ջըրպարտութիւն վարչելի

Պիտի կըրես սիրելի:

Երկու օրեր զեր չանցած

Ըմբռնեցիր թէ ինչ ցած

Ախտեր ունին մեր կուսանք.

Անոնց պարման չի յուսանք:

ՆՈՅԵՄՋԱՐ

Համակամ, ճակատագրիս եղած՝ մոտնալ
(ուզեցի

Ջըրկանքնիրն անգութ դաժան որոնք հոգիս
(կը ճըմղեն.

Կարծեցի ձաղկած հոգիս տաճարիս տակ
(խաղաղիկ

Կը զըտնէ երանական խաղաղութիւն տար
(փելի:

Ո՛վ պատրանք, աւաղ գըլխոյս ուր մեռած
(է ամէն յոյս:

ՀՐԱՆՈՅՇ

Լըոեցէք: Ես կը լըսեմ տաճարիս զրան
(բարախում

Այս ժամուս, մութ սարաժամ ի՞նչ կը խըն
(զրեն կարեւոր:

ԱՐՈՒՍԵԱԿ

Կեցիր Հըրանոյշ,
 Լըսեմ երգ անոյշ.
 Կ'երգէ ուխտաւոր
 Իր վիշտն ահաւոր:

Գրեհն կը լսուի սրտածմբիկ լալահառչ երգի մը
 մըմունջը: Քրմանոյշները յափշտակուած մտիկ կ'ընեն:

ՈՒԽՏԱԻՈՐ

Գըլուխըս շեմիւ, տաճար երկնային,
 Զարնեմ անխընայ. աստղեր կը նային
 Գէմքիս կործանած: Ախ վարդմանիշակ
 Անցան իմ օրեր, յոյսերս անուշակ
 Լեզի վիշտ պարձան. շող աստղը բազրիս
 Այ ինչո՞ւ վառիս ու վառես հողիս:
 Քեզի, Ապողոն, աստուած ողորմած,
 Գիմեմ խորտակուած հայցեմ լիւր գըլթած.
 Կամ խըլէ հողիս, կամ ջընջէ ճակատէս
 Սեւ ճակատագիր: Չիս մ'առներ անտես:
 Ապողոն բարի, ճախրէ ամպերէն
 Զարկ շանթահարէ մարդիկ ապօրէն:

ՀՐԱՆՈՅՇ

Տես, Նոյեմզար, ինչպէս հողիք
 Ամէնուրեք կը տառապին:
 Լի են մեր սիրտ, մեր լըսելիք

Մարդկանց ողբովը զայրազին:
 Կը զայրանան, կը բողոքեն,
 Բայց չի կաթիր գութ երկինքէն:
 Կու լան կ'ողբան ու հառաչեն
 Խեղճ թըշուաններ երբէք գոհ չեն:

ՆՈՅՇՄՁԱՐ

Լըռէ սիրուն Հըրանոյշ,
 Լըսենք անոր երգ քընքուշ:

ՈՒԽՏԱԻՈՐ

Լացի լացի ողբացի,
 Սիրտըս անկեղծ քեզ բացի.
 Տեսար հողիս ով երկինք
 Գաղտնիք ամէն իմ ներքինք.
 Միշտ ապրեցայ սըրտաբեկ
 Բաղլն ինձ ժրպտոճց, անխ երբէք:
 Ինձմէ եղաւ անբաժան
 Կեանքիս վատ բաղլը պաժան:
 Հարազատի դէմք ծիծաղ
 Չի տեսայ ես անխ աւաղ.
 Մանուկ տիոց փոթորիկ
 Յընցեց մարմինս իմ փոքրիկ:
 Բազըլ յոյսիս լուսաբեր
 Պատանք ըրաւ սեւ ամպեր.
 Խարխափելով գետնաքարշ

Անցան օրերս ազէխարշ:
Տաճարներէ ի տաճար,
Կ'երթամ հայցեմ ինձ մի ճար:
Քեզ Ապողոն, եմ պիմած,
Փրրկէ հոգիս տըխրամած:

ՆՈՅՇՄՋԱՐ

Ինչո՞ւ քուրիկ ըլլանք անգութ,
Չի բանանք գուռը փոյթ ընդ փոյթ:

ԱՐՈՒՍԵԱԿ

Դու անփորձ ես, Նոյեմզար,
Պատահած են զէտք հազար:
Այս տարածամ մութ ատեն,
Գայլեր ոչխար փարատեն.
Ի՞նչպէս կըրնանք չի կարծել
Չուզեր տեղիս սուրբ պըղծել:

ՆՈՅՇՄՋԱՐ

Աստուածային սուրբ տաճար,
Կասկած փրչէ շարաչար:

ՀՐԱՆՈՅՇ

Հոգիներու տառապիալ
Պէտք ենք շուտով գուռ բանալ.
Ապողոնի սուրբ խորան
Մեզ չէ միայն մենարան.

Հոգիք ունին իրաւունք
Հոս գալ թափել յորդ արցունք:

ՈՒՆՏԱՒՈՐ

Բաց Ապողոն գուռը բաց,
Բաւ է հոգիս շատ սղբաց:
Աստուածներէ առ աստուած
Դիմեմ յողնած նըւաղած,
Շօշափելով առ խարխափ
Ման գամ կ'ըլլամ յուսախար:
Յոյսիս վերջին վառ կայլակ
Առ Քեզ հասնի զերդ փայլակ:
Քըրմանոյճներ լըսեցէք,
Ան գըթացէք հոգւոյս հէք,
Ապողոնի սուրբ բերան
Խօսքեր ունի բալասան:
Բազդս ինձ եղաւ դաւաճան
Հասած տեսնեմ իմ վախճան:
Բաց Ապողոն գուռը բաց,
Բաւ է հոգիս շատ սղբաց:

ՀՐԱՆՈՅՇ

Արուեսակ քուրիկ,
Հերիք է հերիք,
Ալ չի կասկածինք
Բարի անձ է ինք:

Գընա՛ զուռը բաց
Բաւ է շատ ողբաց:

ԱՐՈՒՍԵԱԿ

Շուտով կը հասնին մեր պարք քլրմականք
Լըսեմ՝ սոնաձայն, ինչո՞ւ մենք հոգանք:
Թէ՛ անոնք կամին զուռը թող բանան.
Ահա և աւագ հասնի քահանան.
Գուցէ կատարուի տօնախմբութիւն.
Հըրանոյշ, ի՞նչ կայ և ի՞նչ նորութիւն:

ՀՐԱՆՈՅՇ

Պարծէի վըրաս, հոգիս Արուսեակ,
Թէ՛ ամէն բանի ես քաջ եմ տեղեակ.
Բայց քանի քուրմեր չեն ուզեր յայտնել
Իրենց գաղտնիքներ ի՞նչ կըրնամ ընել:

Տաճար կը մտնեն աւագ քրմապետը, քրմականք՝ վեց
հոգի, և չորս պառաւ քրմանոյշներ:

ՏԵՍԱՐԱՆ ԵՐՐՈՐԳ

ՔՐՄԱՊԵՏ, ՔՐՄԱԿԱՆՔ, ՔՐՄԱՆՈՅՇՔ և
այլք: Քրմապետը ճոխ հագած, քուրմերով շրջապա-
տուած կը բարձրանայ խորանին վրայ:

ՔՐՄԱՊԵՏ

Ապողոն, պըսակազարբ՝ աստուածարի քա-
(Չաղեղն

Ըսպատէ չըքնաղ կոյսին երկնահաճոյ հարս-
(նութեան:
Անմըռունչ, առանց երգոց՝ առ Ապողոն
(քնարահար
Թող մատչի կոյս ուխտաւոր Ապողոնի էյ-
(նայ ծոց,
կոյս նորեկ փափկիկի նազուկ արծաթթաթիկըն
(շուշան
Նոյեմզար մաքուր հողի Ապողոնի տարիելի:

ՀՐԱՆՈՅՇ

Անպատեհ քեզ քըրմապետ թէ՛ եւ թըլին իմ
(խօսքեր,
Լեր ինծի ներողամիտ. ուխտադրութեան այս
(հանդէս
Անպաճոյճ, անշուք գաղտնի՛ պէտք չէ եր-
(բէ՛ք կատարուի:

ՆՈՅՇՄՁԱՐ

Նախ քան իմ ուխտի տօնախմբութիւն
Ունիմ պահանջել վըրէ՛խընդրութիւն:

ՔՐՄԱՊԵՏ

Ինքնակալ և ինքնիշխան, ես եմ միայն
(քըրմապետ.
Մեկնութիւն իմ հրամաններ երբէք չունին
(լաւ գիտցէք:

Ապողոն, գուշակն Աստուած ինձ ներշնչեց
(անպաճոյճ
կատարել ուխտիդ հանդէս, տենչիկ կուսան
(Նոյեմզար:

ՆՈՅԵՄՋԱՐ

Աստուածներ թէ փափաքին զիս ընդունել
(իրենց հարս,
Գիմաղրեմ այդ փափաքին թէ հանդիտիս
(կուսութեան
իմ ծընողք, համայն ծանօթք ներկայ չըլ-
(լան համախումբ:

ՔՐՄԱՊԵՏ

Զայրագին, պերճաբարբառ՝ ինձ կ'երեւիս,
(Նոյեմզար:
Ողջամիտ և լըրջօրէն պէտք ես խոկալ ու
(խօսիլ.
Պաշտօնեայ եմ աստուծոյ մեհնապետ ծե-
(րունի,
Աստուածոց ահեղ պատգամ մահկանացուաց
(որոտամ.
Երկինքին անջինջ հրաման ես հաղորդեմ
(քեզ այօր,
Անպաճոյճ և լրօնելայն պիտի ելնես սուրբ
(խորան:

Այս Ժամուս խումբ աստուածոց նըստած
(յաթոս պաղպաջուն
Ըսպասեն, կոյս գեղածամ, քս կուսութեան
(հանդիտիլ:
Սիրէ կոյս, քեզ խընայէ, մի գիմաղրեր աս-
(տուածոց:

ՆՈՅԵՄՋԱՐ

Թէ ահեղ և շանթընկեց են և կ'ըլլան աս-
(տուածներ,
Բայց գիտեն խայտառակել, պատուել գիմակ
(կեղծիքի:
Համարձակ՝ իմ խօսքերուս տուր պատաս-
(խան, ծերունի:
Անպաճոյճ, գաղանի անշուք ինչո՞ւ ուխտիս
(սուրբ հանդէս
Փափագիս որ կատարուի և կ'ըստիպես, կը
(պնդես:

ՔՐՄԱՊԵՏ

Ապողոն պատգամատուն, կ'ուզէ իր կամք
(կատարել.
Պատուէրին հաւատարիմ պէտք եմ մընալ
(պաշտօնեայս.
Սանձարձակ ու համարձակ շարժես լեղուղ
(Նոյեմզար,

Պատկառանք օրինաւոր կը պահանջեն եր-
կնայինք:

Լուս կը մնայ Նոյեմբար, պահ մը կը լռեն ամէնքը
ու նոյն ատեն ուխտաւորի լալահառաջ երգը կը լսուի:

ՈՒԽՏԱԻՈՐ

Խեղճուկ մաշած մարմնով փրլած

Կ'ողբամ և չեն լըսեր իմ լաց.

Մուրը տաճարիս դուռը զարնեմ

Եւ պատասխան ինչո՞ւ չտանեմ:

Բաց Ապոզոն օսկի բերանդ,

Միթէ չեմ ես քեզ ջերմեռանդ.

Լըսէ ինձի և տուր հրաման

Որ բանան դուռն ինձ նոյնժամայն:

ՔՐՄԱՊԵՏ

Դըռնապան սուրբ տաճարիս, թող ըստուգէ

(ո՛վ է այն

Մուրացիկ, որ այս ժամուս կը վըրդովէ

(աստուածներ:

ՆՈՅՆԵՄԶԱՐ

Քըրմապետ, մուրացիկն այն բարի աղքատ

(կ'երեւի,

Վաղուց է որ աղերսէ, խընդրէ բանալ իրեն

(դուռ:

Դուռը կը բացուի. ուխտաւորը առանց դռնապանի
քննութեանց, ու հարցմանց ուշադիր ըլլալու, ինքզինքը

տաճարէն ներս կը նետէ, կը փռուի գաւթին կեդրոնը,
աւազանէն ջուր կ'առնէ, կը լուացուի: Ու կը սկսի ա-
ղօթել:

ՏԵՍԱՐԱՆ ՉՈՐՐՈՐԳ

ՈՒԽՏԱԻՈՐ

Փրուիմ գետին՝ գեանամած,

Կոծեմ հողիս արխրամած:

Աստուածներու պաշտօնեայք

Կուտանք հողիք դուք հրեշտակ,

Ձիս թողուցէք առանձին

Կոծեմ հողիս մեղսածին:

ՔՐՄԱՊԵՏ

Ուխտաւոր, թէ մուրացիկ, ի՞նչ ես ասա՛, ո՛վ

(դու մարդ,

Տարածամ այս մութ ատեն լոկ ուրուա-

(կանք թափառին:

ՈՒԽՏԱԻՈՐ

Հողիս մարմնէն դեռ չէ բաժան,

Թէ՛ պըրծէի այրպէս աժան

Երանութեան մէջ ես խորան

Կը կանգնէի արդարութեան:

Հոս գեանաքարշ դեռ տատանիմ

Աստուած կը արէ՛ դատաստան իմ:

ՔՐՄԱՊԵՏ

Բողոքելի՞ր առ վեհ աստուած
 Եկեր ես հոս, հէք արարած:
 Թէ չես պատմեր գալուդ պատճառ,
 Քեզ չի զըթար քըրմաց կաճառ:
 Թեւեկ բընած քեզ հալածենք,
 Գութ ու գորով մենք չերազենք:

ՈՒԽՏԱԻՈՐ

Արդարներու ապաստան,
 Աստուած ունի Հայաստան.
 Թողէք ազատ ազօթեմ
 Մըրաանց մեղքերըս ասեմ:
 Բարի եղէք քըրմականք,
 Մեղմեցէք զիմ բիւր ասնջանք:

ՀՐԱՆՈՅԵ

Տեսէք, ով պարք քըրմականք,
 Ռեխտուորին ամէն ջանք
 Է ազօթել առ աստուած
 Ու ազատիլ ի մեղաց:

ՈՒԽՏԱԻՈՐ

Իմ նըպատակ ու վախճան,
 Աստուածներու խըրախճան
 Տեսնել ապրիլ անոնց հետ,
 Գըանել ուղիդ արահետ՝

ԶՕՐԱՊԵՏ

Հոովմէական իմ քաջեր, խըրոխտ քայլով
 (օն յառաջ:

ԶՕՐՔԵՐ (Կեդրանէն)

Ընդերկար մոլորելով, կ'իյնանք յերկիր ու
 (ժասպառ,
 Գերեզման մեր զիականց կ'ըլլայ անել այս
 (անտառ:

Ծուղակ մը ընկանք,
 Ա'լ չիք մեզ փըրկանք:

ՏԵՍԱՐԱՆ ՀԻՆԳԵՐՈՐԳ

Մոլորեալ զինուորներու ձայնը շատ մօտէն կը լսուի.
 վերջապէս կտրիճ զինուոր մը կ'երեւի, կը փշէ փողը,
 փրկութեան նշան կու տայ. մոլորեալ բանակները դաշ-
 տին մէջ կը լեցուին, կը բարձրացընեն ուրախութեան
 որոտընդօստ աղաղակ մը. շատ մը զինուորներ գերկ-
 ընդխան կը համբուրուին: Բանակներուն սպարապե-
 տը, առհասարակ ամէն զօրապետ կ'ողջագուրէ. և ա-
 նոնց կ'ուղղէ իր այս հարուստանական ու քաջակերա-
 կան խօսքերը:

ՍՊԱՐԱՊԵՏ

Աստուածներ մեզ զըլմացին՝ լոյսը տեսանք
 (երկընքին.

Ահնելի անտառիս մէջ թողունք զոհեր քա-
 (ջարի.

Նահատակ ոչ այնքան շատ անտառին մէջ
 (կը թաղուին.
 Հայրենեաց փառքին համար, մեր կորուստ-
 (ներ պէտք չենք լալ-
 Բըրնկած, քինախընդիր՝ վըրէժ լուծենք
 (ոտոխէն:
 Խորամանկ, հայը վարպետ գարաններով հա-
 (զար բիւր,
 Ընդ երկար մեր կայսերաց պատին բրա-
 (ոսնակիւ:
 Յեշեցէք թէ եռասեան Անտոնինոս, հայերէն
 Խարուելով, ինչպէս առժեց, նուաճեցաւ ա-
 (պիկար
 Պարթեւաց ե խեղճ Պարսից, վայրի անկիրթ
 (զօրքերէն.
 Յիշեցէք՝ հայը ինչպէս Արտաւազլի ծու-
 (ղակով,
 Քայրայեց մեր զօրքերուն սոսկալիթխար
 (բանակներն:
 Արտաւազլ արքայն Հայոց, մոլորեցուց մեր
 (զընկեր:
 Յիշեցէք Հոովմայ զօրաց ի Միջագետք ար-
 (սորում.
 Կայսերաց զբօշն ահարկու խայտառակեց
 (Արտաւազլ:

Հուկս ուրեմն, ահա տեսնենք մեր փրկու-
 (թեան պողոտան.
 Եռասեան Անտոնինոս Հայոց թաղին փոս
 (փորէ.
 Մօտենայ Արտաւազլայ ման գայ բերդեր,
 (զրդեակներ:
 Աստուածներ թէ մեզ չօգնեն ու մեր ծու-
 (ղակ թէ չիյնայ
 Արտաւազլ, զիտցեք զօրքեր, պէտք ենք
 (մըղկլ պատերազմ:

Անտառին ճախակողմէն կը լսուի փողի ձայն. զե-
 նուորները միաբերան կ'աղաղակեն:

ԶՕՐՔԵՐ

Աւետիս . . . ուրախութիւն:

ՏԵՍԱՐԱՆ ՎԵՅՆԵՐՈՐԴ

Աւետարեր հոովմայեցի զինուոր մը, հայկական պա-
 տած զբօշակ մը ի ձեռին, շնչասպառ գաշա կը հաս-
 նի և կ'աւետէ:

ԱԻԵՏԱԲԵՐ

Յաղթանակ . . .

ԶՕՐՔԵՐ

Հըրովմ Արեսիլ փնօք:

ԱԻԵՏԱՌԵՐ

Անտոնինոս ձերբակալեց զԱրտաւազը:

ԶՕՐԳԵՐ

Հըռովմ կանգնէ, ոսկի արձան քեզ հոսպետ
(Անտոնինոս:

ԱԻԵՏԱՌԵՐ

Քաջարի հոսպետին է հըրաման, ակըմբիլ
Միասին, հանդէս սարքել համայն բանակ
(Հըռովմայ:

Արտաւազդ ոսկի շըղթայ կըրէ վըզին. խայ-
(տառակ

Ման գալով, գերի կ'երթայ թագաւորաց թա-
(գուհւոյն:

Զինուորները փողերու հրամանով կը պատրաստուին
և ուրախ գոռում գոչումներով դաշտի ձախակողմէն
դուրս կ'ելլեն: Վաշտ կու գան Նոյեմզար և իր հայրը
Ուխտաւոր:

ՏԵՍԱՐԱՆ ԵՅԹՆԵՐՈՐԿ

ՈՒԽՏԱԻՈՐ

Աստուածներ Հայաստանի քուն կը լինին
(քաղցրանոյշ-
թըշնամին դարձեալ կատղած, կ'ահարեկէ
(հայութիւն:

Ով Հըռովմ, աշխարհակուլ, հերիք չեղաւ
(հարուածներդ.

Հերիք չէ կապիտուլի սոսկալիթիար փառքը
(պերճանք,

Նախանձիս Հայոց թագին, համեստ փա-
(ասց Հայկազուն:

Աստուածներ Պանթէոնի գուլթը շարժեն կայ-
(սերաց:

Վաշ հիգիս, որ զառանցեմ, կ'ողրամ հա-
(րուած աշխարհիս:

Անողորմ պատուհասներ, ճակտին գրուած
(է Հայոց:

Ծաղրական է զիմպրել ճակատադրի հա-
(րուածոց.

Սասանեան ազգ և Պարթև, Հոռովմայեցիք,
(Ասորիք

Յաւիտեան հայկեան գրոշին պիտի ըլլան
(նախանձորդ:

Ով տաճար նուիրական մեր ողբերուն յուշ-
(արձան,

Հովանի եղիր դարձեալ, ծոցըդ նետուող հա-
(յութեան

Փախչողներ, ահա խուժեն, լաց անոնց հեա
ու գտա:

ՏԵՍԱՐԱՆ ՈՒԹԵՐՈՐԿ

Բազմութիւն փախտականներու, սրտուտած զգեստ-ներով, հաշմանդամ, վերաւորեալ, ահեղի վախատու-նով կը խուժեն տաճարէն ներս: Փախտականները այ-րած սրտով՝ միաբերան կ'երգեն:

ԵՐԻՏԱՍԱՐԴՔ

Մեր կըրտակոտ արցունքներ,
Ծըծէ երկիր նահաաակ:
Կըթոտին մեր ծընկուըներ.
Փըլանք եղանք հարթյաաակ:
Ծըծեն սարեր մեր արցունք,
Վառին բրբղին ի գայրոյթ
Էւ պահանջեն իրաւունք.
Կ'ողբան բրնի մեր գաղութ:
Մի լաք սարեր այլ կըրտակ
Ժայթքեցուցէք ձեր բերնէն.
Թող գայ գըտնէ աւերակ
Մեր թըշնամին անօրէն:

Խումբ մը լալկան պառաւներ և ձերեր փախտական,
կը մանեն տաճարէն ներս. անոնք ալ կ'երգեն:

ԾԵՐԵՐ

Հալածանքներ անընդհատ
Ըզմեզ չըրին յուսահատ.
Երբ վէրք առաւ մեր մարմին,
Յոյս փըչեցինք մեր գարմին:

ՊԱՌԱԻՆԵՐ

Հայաստանի ենք մայրեր,
Լիրանանու զերզ մայրեր
Բարձրագագաթ սիգապանծ,
Սոխժ ծընանք գերապանծ.
Լախտ ու նիզակ ու սուսեր
Ձի փըշրեցին մեր ուսեր.
Բազղը մեզ հետ կը կըրուի
Ճետը հայուն չըկորուի:

Ասոնց կը հետեւին իրարու ձեռք տուած՝ խումբ
խումբ ծաղկափթիթ փախտական աղջկունք. կը պա-
տասխանեն իրենց մայրերուն:

ԱՂՋԻԿՆԵՐ

Խիզախ ճամբայ ցոյց տուիք
Մայրեր արի պաշտելիք.
Մեզ պէս ծաղիկ նորատունկ
Կ'ունենան միշտ հայկազունք:
Արին արցունք կոյսերուն՝
Կեանք պարգեւէ յոյսերուն.
Մայրեր ձեզ պէս հայ աղջկունք
Սիրեն միայն հայոց տունկ.
Մեր գազափար անասան
Ազգիս բլաւ լոկ գուսան:
Կայծակ, որոտ ու նիզակ,
Պարկեշտութեան վեհ պըտակ

Հայ կուսանաց ձակատէն,
Չեն խըլած ո՛չ մէկ ատեն:

Ամբոխ մը լեզապատառ կը խուժէ, վերաւորներ կը դիզուին. վայնասունը կը տիրէ. մէկ մասը կ'աճապարէ, տաճար կը մտնէ. մի և նոյն ատեն կը յայտնուին Պարբ կուսանաց և կեղծ հայրը: Ռեխտաւորը որ մինչև նոյն ատեն Նոյեմզարի հետ տխրագին կը դիտէր փախստականները, կեղծ հայրը տեսնելուն, գայրացած անոր կ'ուզէ իր խօսքերը: Ահո՞ղծ հայրը արհամարհական դերը մը կ'առնէ: Պարբ կուսանաց ահռայ կը սրեն:

ՈՒԽՏԱՒՈՐ

Անպատեհ, արխուր ժամուս, ձեռքըս ընկար
(նենդաւոր.

Շեշտակի դիտէ աչերս, գուցէ կարգաս գոր-
(ծերուդ

Ողբերգու և խայտառակ գատապարտեալ
(պատմութիւն:

Ահա կոյս իմ Նոյեմզար, փութա՛ անոր
(սաքն ինկիր.

Չի փըչած քո գարշ ողին, քաւէ մեղքերըդ
(ղազիր:

ՆՈՅՄԶԱՐ

Մոռցիր հայր իմ հարազատ,

Թող որ երթայ ինքն ազատ:

ԿԵՂԾ ՀԱՅՐԸ

Անպատկառ, այդ կոյսին հետ, լարած գա-
(րանդ Ռեխտաւոր

Անլըրդով զիս չի թողուց. աստուածք տես-
(նեն արդար դատ:

Խայտառակ հըռչակեցիր անկապտելի իմ
(անուն.

Ես հիմա տեսնեմ երկինք իմին փառաց
(վրէժխընդիր.

Ի վաղուց փափաքէի ձերբակալել ըզքեղ վատ.
Տակաւին կը յանդըրնիս կ'անուանարկես

(զիմ պատիւ . . .

Ով երկինք, ժամը հասաւ Տարտարոսին ար-
(ժանի

Ահաւասիկ գարշ ողջակէզ նուիրէ սուրս ս-
(խակալ:

Սուրբ հանած Ռեխտաւորին վրայ կը յարձակի: Ամբոխը արգիւելով կ'որոտայ:

ԱՄԲՈՒ

Մենամարտիք անամօթ

Մոռնաք ազգիս ներկայ բօթ.

Ազգիս գըլխին թափի շանթ

Ահա եղանք քարուքանդ.

Վատութիւն է խայտառակ

Մոռնալ մեր զիրք աւերակ.

Եղբայր եղբօր չէ օրէն

Արին ծըծել վատօրէն.

Ամօթ ձեզի ծերունիք

Որ մեր ազգին գութ չունիք:

Չեր տրնական վէճերով

Մտնաք ազգիս սէր գորով:

Մարտիկներ, որոնք ըմբոստացած կռուեր են Անտո-
նինոսի բանակին հետ, յաղթուելով, կու գան կ'ապաւի-
նին Տաճարին, կը թնդացընեն իրենց երգը:

ՄԱՐՏԻԿՆԵՐ

Կրօխ քաջարար մրդեցիներ յառաջ,

Հայ նիզակ, սուսեր հանեցին շառաչ:

Փոքրիկ խըմբերով ճրգեցիներ սարսափ,

Անխընայ զարկիներ եղանք ուժաթափ:

Հոովմայ այս կրօխ՝ չէր զիւցագնութիւն,

Այլ խեղճ վատուցի գաւաճանութիւն.

Բարեկամարար որսաց զԱրտաւազդ,

Ու ապա մրցեց պատերազմ անասաւ.

Մեր մարտիկ խումբեր չի մնացին ոչխար,

Չուզեցիներ ըզմեզ որ համայն աշխարհ,

Քարոզէ կոչէ ողորմելի ազգ.

Մանգագով սըրով, զերզ ցորենի հասկ,

Որչափ հընար էր փրոնցիներ զիտի:

Մեր հտեւ մընաց աշխարհս աւերակ,

Չի կար այլ եւս յոյս գոռ զիմադրութեան.

Փախանք որ փրկիներ կայծ վրէժխընդրու-

(թեան.

Հայկազունք մեր ազգ՝ թէեւ չըլատուած

Խոյս տայ գըլխիկոր, գաղթէ ընկճըւած.

Մակայն չէ մոռցած արիական սիս,

Պիտի չի թողու իր ազգն ստնակոխ:

Ասոնց հտեւէն կու գան ուրիշ վիրաւորեալներու
խումբ մը՝ տղաքները իրենց ճողոց պլլուած, կը ճուան,
կու լան. սակայն այդ փախստականները չեն խորտա-
կուած, քաջարի տոկունութեամբ կ'երգեն մարտագոռ:

ՎԻՐԱՒՈՐԵԱԼՆԵՐ

Արտաւազդ՝ ըզքեզ երբէ՛ք չեն մոռանար հայ-

(կազունք:

Գարշելի ըստորնութեամբ գերի բըռնեց ըզ-

(քեզ Հոովմ.

Հաշմանդամ, տարուբերեալ կ'ըլլանք երկրէս

(տարազիր,

Բայց յաւէտ և անդադար բողբոջ ենք

(Հըրովմայ.

Թըշնամին մեր հտեւէն սուր ու նիզակ ար-

(ձակէ,

Հալածէ ըզմեզ բըշէ յափըշտակէ մեր գանձեր.

Կը տիրէ Արտաշատայ համայն ահեղ բեր-

(գերուն:

Ընդերկար Հայոց աշխարհ Հոովմայ գերի չես

(մընար,

Վրէժխընդիր քուկին պատուոյդ պիտի բլլան

(քո սրդիք.

Աստուածներ թէ բնդ մոռնան, բայց դու
 (մայր մի լըքանիր
 Հայկազունք, վիշապազունք են քո սերունդք
 (կորիւններ.

Մըռնչեն, ահոայ սըրեն, կը բըզըկան
 (օտար գրօշ.

Աըշաւիր Պարսից արքայ, Արտուազղայ հա-
 (բազասն

Քաջն Աըշամ մեզ առաջնորդ և թագաւոր
 (պըսակէ:

Կրակ ու սուր վատ Հըրովմայ չեն ջըլա-
 (տեր մեր բազուկ.

Այլ վըրէժ բըռնկըցընեն մեր կրակ կըսրած
 (սըրտին մէջ.

Առաջնորդք մեր քաջորդիք մեզ քառսէն կը
 (տանին,

Կոյր բազըին մենք աներկմիտ համակեր-
 (պուած կը քալենք

Տաճարի նրկուղներէն, գաղթենք խոյս տանք
 (անվրկանդ,

Յուսալիր քաջալերուած առաջնորդաց կո-
 (րովով:

Ուխտաւորը այս ամէն տեսարաններէն և երգերու
 խորթութենէն բոլորովին յուզեալ, կը մոռնայ սըր-
 տին մէջ բռնկած անճնական ոխը, իր ծոցէն դուրս կը

հանէ սուրը, կու տայ զայն Նոյեմզարայ կեղծ հօրը և ա-
 նոր սուրը ինքը կ'առնէ և զայն համբուրելով կը գոռայ:

ՈՒԽՏԱՒՈՐ

Մոռնանք այլ եւս կոխ տընական . . .

Ազգիս կըռիւ նուիրական,

Հալէ ջընջէ անճնական ոխ.

Լոկ մըտածենք ազգիս ոսոխ:

Եկ համբուրուինք սիրուն եղբայր,

Ալ չի մըղենք ոխ վայրապար:

ՆՈՅԵՄԶԱՐ

Օրհնէ երկինք այս հաշտութիւն

Օրհնէ և իմ ուխտապրութիւն:

ԱՄՔՈՒԸ (մտնելով տաճար)

Յառաջ մէկ սիրտ մէկ հոգի

Չըլլանք երբէք վատոգի.

Գործենք փարած մէկմէկու

Ազգ մը կ'ըլլանք ահարկու:

Handwritten text, likely bleed-through from the reverse side of the page. The text is mirrored and mostly illegible due to fading and the angle of the page. Some words like "Handwritten" and "written" are faintly visible.

J. Brown
Henry
Henry

«Ազգային գրադարան»



NL0337410

Մ. Մ. Մենյան 500

Մ. Մենյան
Մ. Մենյան

« Ազգային գրադարան



NL0337410

28745